17180

891.99
U-39

1913

№ 20 03

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

№ 7

ՍԵՅՐԻ

ԾԻԼ ՈՒ ԾԱՂԻԿ

ՆՕՎԵԼԼԱՆԵՐ ԵՒ ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԵԿ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Տպ. Ն. Աղանեան, Պօլիս. 7

ԹԻՖ ԼԻՍ

Ընկերութեան հրատարակութիւնները

1. Լ. Ուօլլէս. Բէն Հուր. հ. I. թարգմ. անգ. Փ. Վարդանեան. . . . . — 75
2. Նոյն, հ. II. . . . . — 75
3. Շիրվանզադէ, Արտիստը. . . . . — 25
4. Մուրացան. Գէորգ Մարզպետունի, պատմական վէպ . . . . . 1— 20
5. Ժուկովսկի. Քնած արքայադուստրը, պատկերազ. հէքիաթ. փոխադր. Ա.Թ. Խնկոյեան. — 15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմուածքներ . . — 50
7. Նար-Դոս. Մահը, վէպ. . . . . 1— 20
8. Ն. Ռուբակին. Ստորերկրեայ կրակ. պատ. — 50
9. Զ. Դիկկենս. Դաւիթ Կոպպէրֆիլդ. պատկ. վէպ. մասն առաջին, անգլ. թարգմ. Փ. Վարդանեան . . . . . — 75
10. Նոյն, մասն երկրորդ . . . . . — 75
11. Նոյն, մասն երրորդ . . . . . — 75
12. Շիրվանզադէ. Երկերի ժողովածու, հատ. IV 1— 50

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
1912

№ 1. Գաբրիէլ Դ'Անունցիո. Ջիօկոնդա. ողբ. 5 արարք. ֆրանս. թարգմ. Ս. Յակոբեան.
№ 2. Իլիա Ճաւճաւաձէ. Մուրացկանի պատմածը. վրաց. թարգմ. Տ. Փիրումեան։
№ 3. Ա. Ահարոնեան. Աստծու կրակը։
№ 4—5. Իւշկևիչ. Թագաւոր. ռուս. թարգմ. Յ. Յովհաննիսեան։
№ 6. Հենրիկ Իբսէն. Ուրուականներ, թարգմ. գերմ.
№ 7. Սէյրի. Ծիլ ու Ծաղիկ.

ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱՄԱՐը 15 կ.

39/.99
Ս-39

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
№ 7

ՍԷՅՐԻ

ԾԻԼ ՈՒ ԾԱՂԻԿ

ՆՕՎԵԼԼԱՆԵՐ ԵՒ ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶ
Էլէկտրատպ. օր. Ն. Աղանեանցի, Պօլիս. 7.
1913

808

6858-ՆՅ

ԴԻՒԹԱԿԱՆ ԵՐԳԸ

Զեմ մոռանում երբէք մանկական արցունքներս, որ մի գիշեր առատ ու սրտաբուղխ թափեցի մեր տան կտրին՝ մօրս գրկի մէջ...

Խոր գիշերուայ լռութեան մէջ մի հեշտագին երգ էր կարծես, որ բարձրացրեց արտեւանունքս... Գլուխս վերցրի բարձից ու անյաղ ականջ դրի... Անվախճան ցնորքի մի երգ կարծես հոսում էր հեռու—ծառերի միջից և փռւում հարթ կտուրներին նիրհած խոնջ գլուխների վրայ...

Վայելքների ու անմահութեան տենչավառ զգացմունքներս բոլորը մէկէն զարթնեցին հոգուս մէջ, ու միտքս ծաւալւեց, ձուլւեց յաւերժութեան հետ...

Դա իմ ցնորքի երգն էր ու ինձ էր կանչում...

Եւ նրա տեղն ու ճանապարհն ինչքան անյայտ էին ինձ, և որպիսի հեշտաթև մոռացքով ես կը բռնէի այդ ճանապարհը...

Զգեստս վերցրի ու մէկ թեւս հագնւեց՝ առանց մաքիս հարց տալու...

Կտուրները ողողւած էին լուսնի արծաթ շողերով, անդորը նիրհում էին բոլոր անկողիններն ու օրօրոցները և հեռուն ծառերն էին՝ մութ, անշարժ...

Այս քնի լռութեան մէջ, բոլոր նիրհող գլուխների միջով ես պիտի անցնեմ, մէն-մենակ գնամ գտնելու այն երգը, որ այնպէս դիւթիչ հնչում է հեռից ու խօսում է իմ հոգուն յաւերժութեան խորքերից...

Եւ կը լինեմ դուրս ու հեռու այս նիրհող գլուխ-

ների սահմաններից, և երբ արևը նորից կը տաքացնի երկիրը, նրանք կը վարեն հողը, կը վառեն իրենց օջաղները ու չեն անսայ թռիչքս իմ ցնորքի, դիւթական երգի ետևից... Ու կը լինեմ ես մենակ՝ մոռացքիս հետ՝ յաւերժութեան թևերի վրայ...

Ոտքի ելայ, բայց միւս թևս տակաւին չհագնուած, զգաստ մօրս ձայնը կանչեց ինձ.—Ի՞նչ ես անում։

—Գնում եմ։

—Ո՞ւր։

—Ականջ դիր, մայրիկ, ինչպէս գեղեցիկ է այս երգը, նրա մօտ եմ գնում... Ա՜յ, այնտեղ ծառերի ետևում է, ես ճանաչում եմ։ Այնպէս արագ կը վազեմ, որ ոտներս գետնին չեն դիպչի և իսկոյն կը հասնեմ նրան... Ականջ դիր, ինչպէս քնքուշ ու անուշ է... նա իմ երգն է... ինձ է կանչում...

—Հանգստացիր, բալա՛ս, դու երազի մէջ ես... Այդ երգը հեռուից, շա՜տ հեռուից է գալիս, դու խակի չես հասնի նրան...

—Ո՛չ, ո՛չ, մայրիկ, ականջ դիր, ինչպէ՞ս մօտիկ է. ահա՛, ծառերի ետևում... Ականջ դիր, չե՞ս լսում, ինչպէ՞ս նա կանչում է... ինձ է կանչում... ես բոլորը հասկանում եմ...

—Քնիր, անգինս, այդ ցնորք է...

—Լսիր, ականջ դիր, ինչպէ՞ս քաղցր է, ինչպէ՞ս ուրախ... միթէ դու չե՞ս լսում և չե՞ս հասկանում... իմ սիրտս թռչում է նրա մօտ, մայրիկ, բոլոր անմահական ծաղիկները և բոլոր երգող աղբիւրներն այնտեղ են, մայրիկ. նրանք ինձ միշտ, ամեն օր կանչում են... Ես գնում եմ, մայրիկ, գնում եմ նրանց մօտ, ինձ կանչում են...

—Խեղճ, դաղարգիւն բալա՛ս, հանգստացիր... Երգող աղբիւրներ, անմահական ծաղիկներ չկան...

երգն էլ չկայ, նա քո ցնորքն է, խեղճ բալա՛ս... քնիր... Գիշեր է, դուրսը հարամիներ, սատանաները լիքը՝ սև, զարհուրելի. հազար տեղից աչքեր են նայում մարդու վրայ... ահ ու մահ է դուրսը... քնիր, քնիր... քո ցնորքդ է, ցնորքիդ մատաղ...

—Իմ ցնորքը՞... Երգը, դիւթական երգը. այնտեղ ծառերի ետևում, անմահ ծաղիկների ու երգող աղբիւրների մօտ... Ես այն երգն եմ ուզում, մայրիկ, այն երգը, այնպէս շա՜տ, շատ ուզում եմ...

—Արցունքներիդ մատաղ, այն երգը դու ես, նա քո մէջն է, երգիր, իմ անգին, թագաւոր բալա՛ս...

—Ո՛չ, ո՛չ. երգը, իմ երգն եմ ուզում. այնտեղ ծառերի ետևում...

—Այնտեղ սատանաներն են, հարամի աչքերը, ահն ու մահը... Մտիր տեղդ, ես քեզ կը ծածկեմ, դու քուն կը լինես, առաւօտեան զարթնես լոյս ու արև կը լինի, և կը մոռանաս այն երգը...

—Երգս, իմ դիւթական երգս... Սիրտս լալիս, մեռնում է, մայրիկ. ես այնպէ՞ս հիւանդ եմ... այնպէս շա՜տ, շատ լալ եմ ուզում... Գրկիր ինձ, մայրիկ, թող շատ լամ ու գլուխս փայփայիր, արցունքներս ծածկիր քո գրկի մէջ... Իմ երգս, դիւթական երգս... գնա՜ց... չեմ գտնի նրան...

—Հանգստացիր, ծածկիր երեսդ իմ գրկի մէջ, արցունքներիդ հեղեղը քամիր ու հանգստացիր, հանգստացիր ու քուն եղիր իմ գրկի մէջ... Դու հիւանդ ես, իմ խեղճ բալա՛ս...

—

Այն օրից անցել են շատ տարիներ... Այն երգը լսել եմ ես շատ անգամներ և լսում եմ այժմ էլ... Բայց ամեն անգամ, որ ես ուզում եմ վազել—հասնել նրան՝ խոր, կուսական անտառի ետևում, շուրջս ամեն ինչ

ամեն բան աղաղակում է, որ նա ցնորք է, որ նրա ճանապարհին սուուերներն են, հարամի աչքերը, սոն ու մահը....

Եւ թափւում են արցունքներս առատ ու սրտաբուղխ, խամրում են յոյզերս, և ես մնում եմ կանգնած՝ առջևիս մի հանգած խարոյկ, որ իմ հոգին է...

Ա՜խ, ցնորքս, իմ դիւթական երգը...

1910 նոյեմբ.

ԱՂՆԱՆ ԴԻՄՔ

Ամենից առաջ կաղամախու տերևներն են դեղնում... Տերևներն սպիտակ ու անբիծ կաղամախու... Ու տխրութիւնն ինչպէս արդէն մեղմով նստում է այդում։ Ցարատև բեղմնաւորութեան տակ ծրմռւած հրախտաւոր ծառերն արտասուել են պատրաստւում և գետնի վրայ տեղ-տեղ դեղին տերևները հողի մայրութիւնն են գգւում... Ինչպէս, ինչպէս արդէն խայտացող կեանքը փախչում է այդուց. հողմը կոծում է ծառերը, խոտն այլևս չի բարձրանում, և ջուրը, ուրախ ու մշանջենապէս կայտառ ջուրն այլևս չի գգւում ծառերի արմատները, չի ծովանում այդում և չի արտացոլում ուրախութիւնն իր գոգերում... Ա՜խ, գալու է այլևս տխրութիւնը, և կաղամախու անբիծ տերևներն ինչպէս արդէն նրա առաջին արցունքներն են լալիս...

Ու իմ հոգուն էլ մեղմով յառնում է տխրութիւնը, և աչքերս արդէն շօշափում են արցունքի մօտալուտ շիթերը...

Թախծութիւնն իջնում է սրտիս, ու հոգիս ձմրան սառոյցների միջով գարնան ջերմութիւնն է տենչում... Ինչպէս հոգիս հասկանում է սուսացող տերևների վիշտը. իրանց կանաչ ջահելութեան երազներն են փափագում նրանք և դալուկ ու մեռնող ծերութիւնն են լալիս։ Կընկնեն նրանք, և նոր գարնանը նոր տերևներ իրանց մանկութեամբ կը կանաչազարդեն՝ ցրտի թէ ջերմի մէջ միշտ կանգուն ծառերը։ Եւ ինչպէս անյագ

կը խայտան ու կը շշնջան նրանք՝ անկարեկիր անցեալ գարունների ու անցեալ տերևների մահւանը... Եւ մայր ճղները մայրական սիրոյ նոր ուժգնութեամբ կը գգւեն իրանց նոր մանուկներին՝ մոռացած արդէն հներն ու մեռածները...

Ա՜խ, ինչպէս արցունքոտ ու ինչպէ՞ս տխուր է... Եւ գալկանում են ուրախութիւններս, մահի դժգունութիւնն են հագնում... Կը գայ ձմեռն իր ցրտերով, կը գայ գարունն իր երգերով, և ձմրան ցրտերի, գարնան երգերի մէջ միշտ արթուն իմ հոգին՝ նոր գարնանը կը հագնի ուրախութեան նոր հանդերձներ, կը խայտայ բերկրանքի նոր երգերով... Եւ ինչպէս անհոգ նրանք կը փթթեն ու կը հրճւեն՝ անկարեկիր անցեալ գարունների ու անցեալ ուրախութիւնների մահւանը... Եւ հոգիս ինչպէ՞ս մայրական սիրոյ նոր ուժգնութեամբ կը գգւի իր նոր մանուկներին՝ մոռացութեանը թողնելով հներն ու մեռածները...

Ա՜խ, ինչպէս ճնշում է սիրտս արցունքի թախծութիւնը, և ինչպէս հոգիս ձմրան ցրտերի միջով գարնան ջերմութիւնն է տենչում...

1911 հոկտեմբ.

ՍՓՈՓԱՆՔ

Ով ինչ կուզենայ աշխարհում,—թող լինի նրան. իսկ ինձ տւէք զգալ ուրիշների տխրութիւնը, սրբել մի կաթ արցունք աշխարհի վրայ, արբենալ նրանով ու սուզւել նրա տխրունակ անձկութեան մէջ։

Ինչպէ՞ս երջանիկ հանդչում է կատուն ծնկանս վրայ։ Աշնան առաջին ցրտերին նա այնպէս շատ փընտռում է տաքութիւնը։ Եւ հրաւիրում եմ նրան գիրկս, փաթաթում վերարկուով. նա ծածկում է աչքերը, կըծկում ոտներն ու ննջում է մուշ-մուշ։ Ես նայում եմ նրան երջանիկ հայեացքով՝ պահելով ձեռքս իր մազերի փափկութեանը հուպ և զգալով կողիս վրայ նրա կողերի բարձրանալն ու իջնելը...

Աչքերս շաղւում են անձկութեան մէջ և տեսնում եմ՝ հեռուներում—փակ պատուհանների ետևում ծաղիկներն են ցրտահար գողում և մինչև առաւօտ գունատւում ու մեռնում անտէրութեան մէջ...

Ինչպէ՞ս սէրն ու քնքշութիւնը քիչ են աշխարհի վրայ...

Ու հեռու կատուներից հասնում է ինձ անտէր մի կատւի ցաւագին մլաւոցը։ Ցուրտը շոշափում է նրա ոսկորները, և նա կոխելով թաթերը թաց ու պաղ գետնին, յուսահատօրէն անցնում է մի կատուից միւսը. անցնում է ցաւագին մլաւոցով և ապաստան չունի ոչ մի տեղ, և չեն բացի դռներից ոչ մէկը նրա համար, ներս չեն կանչի, տաքուկ մի անկիւն չեն ընծայի նրան...

Ու գալիս են նրա վշտի արցունքներն իմ աչքերս, ու ես գգում, խանդաղատում եմ իմ կատուին, հաղորդում եմ նրան մարմնիս ջերմութիւնից աւելի շատ բաժին և ուրախութիւն ու թեթևութիւն զգում արցունքներիս մէջ...

Նա տաք անապատների իր վայրի ցեղակիցների արիւնն ունի. նրա նախահայրերը թաւալել են հրաշէկ աւազների վրայ, նրանց մազերը գուրգուրել են արևի ջեռուցիչ ճառագայթները և թոքերում ներս է խուժել տաք ու խանձող օդը։ Դարերի խոնջութեան վրայով ձգւում է դէպի նա իր պապերի առհաւութիւնը. տաքութիւնը, ջեռուցիչ տաքութիւնն է նրա կեանքը, և տալիս եմ նրան այդ, ինչքան ես ունեմ...

Ա՜խ, ոչ թոշնող ծաղիկները և ոչ ցրտի մէջ հառաչող անտէր կատուն կարող են պատմել իրենց տխրութիւնը և աղաղակել մահուան տագնապի մէջ։ Եւ փնտռում է հոգիս նրանց խեղճութիւնն ու անտէրութիւնը. նրանց կարօտն է փափագում կողերիս ջերմութիւնը, և ով ինչ կուզենայ աշխարհում, թող լինի նրան, իսկ ինձ տէր ծաղիկներին, որբերին, արևի ու գգւանքի կարօտներին գուրգուրելու հանգուցիչ սփոփանքը...

1911 հոկտեմբ.

ՀՈՂԻ ԳԱՆՁԵՐԸ

Ափսո՜ս, ափսո՜ս որ սրանք մի օր պիտի իջնեն հողը, այս սև, այս ճոխ, այս փայլուն գանգուրներս...

Նրանց խիտ խոպոպները, որ աչքերիս համար այնքան հրապոյր ունեն և որ այնքան անուշ յոյզեր են ծնում իմ մէջ. նրանց փափկութիւնը, որ այնպէս լիառատ շոյանքներ է տալիս ափերիս և ուրախ մանկիկի նման գալարում ու ծիծաղում է մատներիս մէջ, —մի օր այլ ես չպիտի լինեն...

Չպիտի լինեն այլևս իմ թեաւոր հաճոյքները, երբ մանուկները գգւում ու հրճւում են իմ գանգուրներով, երբ մայրս հայում է նրանց ու իր հիացական բառերն ասում ինձ, երբ իմ արիւնակից կիներն ափսոսանքով նրանց փափկութիւնն են գովում։

Եւ չի լինելու աչքերիս այն գինովի փայլը, որով ես գովական գանգուրներս զնում եմ շքեղ ու սիրառատ կիների ալեոյզ կրծքին և մոռացումի գերագոյն հաճոյքով՝ թողնում եմ նրանց՝ քնքուշ, խանդոտ մատներով տենչագին որոնել ու քաղել առնութեան ուժն ու գեղեցկութիւնը նրանցում. չեն լինի այդ վայրկեանների իմ հայեացքները՝ դէպի վեր հայող և կնոջ աչքերի մէջ նրա սիրոյ մերկութիւնը ճանաչող ու ըմպող իրենց փայլով... Ափսո՜ս, ափսո՜ս, որ այս գանգուրներս՝ շքեղ ու կորովի՝ մի օր սև հողը պիտի իջնեն...

Ինչքան թանկագին ու մինչև մահ գգւելի է այս հողը, այս սև հողը։ Բոլոր գեղեցկութիւնների նաւ-

բական խորանն է, որ մայրաբար իր գթոտ գրկումն է ամփոփում նրանց բոլոր բոյրերը, փայլն ու շքեղութիւնը։ Նրա իւրաքանչիւր փոշեհատիկը մասն է մի ամբողջ գեղեցկութեան, նրա իւրաքանչիւր բուրմունքը բերում է իր հետ հողի ծոցն իջած անթիւ գեղեցկութիւնների ձայները...

Օ՜, ինչքան թանկագին է այս հողը, այս սև հողը... Նրան են խառնուած Բէթթիչէի հրեշտակային անբծութիւնը, Պենելոպայի կնոջական առաքինութիւնը, Համլէտի գանգուրները և Կլէօպատրայի աչքերը. նրան են խառնուած Բէթխովէնեան հնչիւնների երկնային ներդաշնակութիւնը, խօլական յղացումները Միքէլ-Անջելօյի և մատների քնքշանքը Ֆլորէնտեան Ռաֆայէլի...

Եւ հարիւր տարիներ յետոյ հողի գրկում կը լինեն հելլէնական ու իտալական այսօրուայ բոլոր կոյսերի շքեղ մազերը, բոլոր մանկիկների հրեշտակային սէրը, իմ մօր սիրտը, նաև իմ գանգուրները... Հոմերն ու Վերգիլը միշտ կը ճոխանան իրենց հազարամեայ գերեզմաններում և ներքևից վերև լոյս-աշխարհի աղքատութիւնը կը հեգնեն...

Ա՜խ, ինչքան անսահման հարուստ է սև հողը և ինչքան անսահման հարստանում է նա, մինչդեռ խեղճ, աղքատ աշխարհը երբէք չի հարստանայ, երբէք... Բոլոր դարերն իրենց հարստութիւնը հողի գիրկն են լեցնում, և նրա կուրծքն ուռչում է անթիւ դարերի հարստութեամբ, մինչդեռ խեղճ աշխարհը մի սոսկ դարու հարստութիւն էլ չի ամփոփում իր մէջ...

Ա՜խ, թանկագին հողը, այնտեղ է գեղեցկութիւնների աշխարհը, և այնտեղ են ապրում բոլոր դարերի բոլոր գեղեցկութիւնները,—Հոմերի բամբիռից մինչև իմ գանգուրները...

Եւ թող գրկեմ ես նրան իմ բոլոր ցանկութիւն-

ներով, հոգով և սիրով խառնւեմ նրան, գնամ միանամ ու ձուլւեմ բոլոր դարերի գեղեցկութիւններին... Քաղցր է դա, շքեղ, հոյակապ ու յաւիտենական...

Բայց և այնպէս, ափսոս, որ այս գանգուրներս հողը պիտի մտնեն, այս ճոխ, այս փայլուն գանգուրներս, և մանուկներն այլևս չեն գգւի նրանց, մայրս չի հիանայ և սիրածս կիները չեն տենչայ նրանց...

1911 հոկտ.

ԼԵԹԱՅԻ ԵՐԳԸ

Մարմինս անկողնի հանգիստն է տենչում...

Ինչպիսի՜ գեղեցիկ բանաստեղծութիւն են հիւսել Յոյները հնում. աշխարհի վայելքներից ու տառապանքներից ընկճուած, աչքերը լիքը յոգնութիւն ու ծընկները՝ ծանրութիւն, յամրօրէն առաջանալ դէպի սրբազան Լեթայի քարեայ ափերը, խոնարհուել այնտեղ, յոգնած շրթունքներով ըմպել մի ումպ ջուր, խորասուզուել խոր քնի մէջ և զարթնել թարմ ու հրապուրիչ մի նոր աշխարհում, վերստին ապրել՝ պարզած բոլոր առագաստները...

Որքա՜ն խորապէս գեղեցիկ է այս բանաստեղծութիւնը...

Եւ այնքա՜ն շատ են յոգնաստանջ ուղևորները, որ նրանց համար հոսում է գոչգոչան մի գետ...

Հրապուրիչ է բարձերի փափկութիւնը և լի գուրգուրանքով՝ վերմակի ջերմութիւնն ու ծանրութիւնը...

Թող գայ յափշտակէ ինձ մոռացութիւնը, որովհետև այլևս յոգնել եմ յիշելուց։ Իմ միտքը հիւսուած է կարծես ողջմամբ զգաստութեան թելերով, և հոգիս կերտուած՝ ձայների ու սարսուռների յարաշարժ լարերով...

Հողի նիրհը և եթերի տատանումները նրանց հետ են խօսում...

Նրանք պատասխանում են ցերեկի բոլոր ձայներին, և գիշերի քնաբեր խաղաղութիւնը շշուկների ովկիանոս է փռում նրանց ոտների տակ...

Ինչքա՜ն, ինչքա՜ն յոգնած եմ այդպէս անվերջ յիշելուց. ուր էր թէ դար մոռացութիւնը և յափշտակէր ինձ...

Փիչ հեռուում Լեթայի գոչգոչան ալիքները լինէին. բարձրանայի ծանրացած ծերունու նման և գաւազանիս ուժին ապաւինած, հատ-հատ՝ մահուան ծանր զանգերի նման՝ գցէի լքուած ծնկներս...

Կոպերէս յոգնութիւնը ծորար և մշուշների մէջ թաղէր գետի միւս ափերը...

Մինչև հասնելս քարեայ ափերին, ուժերիս վերջին կաթիլը հոսէր իմ մէջ, ու խոնարհուելով ջրերի վրայ, ըմպէի մի ումպ նրանցից և գլուխս՝ մահուան պէս անդգայ՝ հանգչէր մոռացութեան թևերին...

Շոգիանար իմ մէջ զգաստութիւնս, մեռնէին հոգուս շարժուն լարերը, և դարերը խոր գիշերի նման ընթանային իմ վրայով...

Երբ զարթնէի, ուժերս եռային իրենց թարմութեան մէջ, արևի լոյսն ինձ համար կայտառ մանուկ լինէր, և մարդիկ բոլորը նոր՝ նոր դէմքերով, նոր երգերով...

Ինչպէ՜ս գեղեցիկ բանաստեղծութիւն կը լինէր սա...

Այդպէս գեղեցիկ էր բանաստեղծութիւնը հնում... Մարմինս անկողնի հանգիստն է տենչում. ա՜խ, ուր էր թէ մոռացութիւնը յափշտակէր ինձ, հանգչէր զգաստութիւնս, և կոպերս լեռների ծանրութեամբ ծածկէին աչքերս...

Նիրհէի...

1911 հոկտեմբ.

ԲԱՐԵԿԱՄՍ

Ինձի ասին բարեկամդ եկաւ։

Հեռու ծովերով, հպարտ լեռներով եկաւ իմ բարեկամս... Նրան բերել են արշաւասոյր անիւներն աղմուկով և նաւերը դրօշակներով ու երգերով...

Եւ իմ մանկական հրճւանքովս մինչև սանդուխքների տակը դրկաբաց հասայ. շուրջս հնչում էր աշակերտներիս զուսպ ու կորով տա բերկրանքը։ Մինչև պատշգամբ բարձրանալս՝ ոսկեշող մանկութիւնս փռեց մտքիս մէջ իր ծիրանի թևերը, և նրա բուռն ու անհնազ սիրով գգւանքներիս մէջ առայ մանկութեանս ընկերին, իմ վաղեմի, շատ վաղեմի բարեկամին։ Ինչպէս ախորժ ու հեռաւորօրէն քաղցր էին նրա հպումներն իմ մկներիս. հեռաւոր մանկութեանս բուրմունքներն էին կենդանանում իմ մէջ։

—Մի՞թէ դու եկար, իմ բարեկամս, կապոյտ ծովերի, բարձր լեռների ետևից եկար... Քեզ բերել են յաղթական ու աղմկոտ անիւները, քեզ բերել են հորիզոնների միջից խնդութեան պէս ծագող դրօշակները...

Օ՜, բերէք ինձ իմ պատմուճանս. բերէք և թող նրա ծալքերը շքեղօրէն կախուեն իմ թևից. նայեցէք՝ ատաճարս մարգարտաշար են, փայլուն ու սպիտակ՝ ինչպէս ծովերի կուսութեան գաղտակուրը։ Եւ տեսէք, ինչպէս շքեղօրէն պսակում են ինձ գանգուրներս...

Բայց բերէք, կանաչ ոստերից բերէք ինձ պսակ. ես կը դ եմ նրան գանգուրներիս. չէ՞ որ այսօր մեծ տօն է ինձ համար... Հեռու ծովերի, բարձր սարերի ետևից՝ արշալոյսներով և վերջալոյսներով գեղեցկացած՝ ահա եկել է իմ մանկութիւնս...

Տէ՛ք բաժակները՝ լի կարմիր ու նեկտար գինով. տէ՛ք, որ չխկացնենք իմ բարեկամիս հետ, և խմենք նրանց մեր մանկութեան պատւին... Գինեէտ այգիների, սաւերոտ ծառերի տակ է ուռճացել իմ մանկութիւնը, մարգագետինների ճոխութեան և նրանց հազարգունեայ ծաղիկների մէջ է խայտացել նա, ճերմակ ու ջինջ աղբիւրներով, շաղի ու ցօղի մէջ է թարմացել և ընկերական անմեռ խաղերի ու մտերմութեան մէջ է անուշահոտուել նա...

Օ՜, բերէք ինձ պսակս՝ կանաչ ոստերից. նեկտար շրթունքով ու փղոսկրի պէս փայլուն ատամներով դուրս պիտի գամ բարեկամիս հետ ծովափն զբօսնելու։ Ահա գեղեցկութեան կարօտ բազմութիւնները խռնուում են այնտեղ։ Ես այսօր բարեկամիս հետ պերճօրէն պիտի զբօսնեմ նրանց առաջ. նրանք կը նեռուեն դէպի մեզ իրենց անյագ աչքերով, ու ես կը տամ նրանց անմահ վայելքը—մանկութեան գեղեցկութեան վայելքը...

Օ՜, բերէք ինձ պսակս և նայեցէք, որ ես գեղեցիկ լինեմ այսօր այնքան, որքան չեմ եղել գեղեցիկ ոչ մի օր. յարդարեցէք պատմուճանիս քղանցքները, ճոխացրէք զանգուրներիս ոլորները,—ես այսօր բարեկամիս հետ պիտի զբօսնեմ մանկութեանս պատւին. պիտի զբօսնեմ՝ հրճւանքներս բոլորն առատօրէն ասպարէզ հանած։ Նայեցէք, ով գիտէ, ես կուզենամ այսօր՝ իմ մանկութեանս պատւին՝ բոլոր հրճւանքներովս ճոխացած—մեռնել, և թող գեղեցիկ լինեմ...

Բարձր լեռներով, կապոյտ ծովերով եկել է իմ բարեկամս. եկել է յաղթական ու գրգռող անիւների հետ, հորիզոններից խնդութեան պէս ծագող դրօշակների հետ...

Իմ բարեկամս...

1911 հոկտեմբ.

6858-57

ԱՅՍՕՐ ԳԱՐ ԻՆՁ ԻՄ ՍԵՐՍ

Արիւնս յուզւում է մանդօլինի ձայնից...

Ա՜խ, այսօր հեռու երկրից գար ինձ իմ սերս. գար ձիու վրայ՝ ձիւնների միջով... Ոտների տակ շողշողային ասպանդակները, մաղերի վրայ հանգչէր ոսկեգոյն ապարոշը և ձեռքերի մէջ խաղային սանձն ու դալարահար մտրակը... Գար գետնի ձիւները դոփելով, և այտերը վառէին կարմրի մէջ ու աչքերից ցայտէր այրական հուր...

Իր նուրբ ու գիրկ իրանը բարձրանար ձիու մէջքին՝ որպէս առասպելական մի ամազոն, և իր սրունքների կարծրութիւնն ու վայելչութիւնը ողողէին ասպանդակներից ներքև... Ձիու վռնչիւնները որոտային ինչպէս ամպ, և մեր տան մօտերքում արշաւէր նա դէպի ինձ գրկաբաց ու թեթև ամպի պէս ձիու վրայից իմ գրկանքներիս մէջ թռչէր. թռչէր լի գգւանքներով, և իր այտերի կարմրութիւնն ու աչքերի հուրը շրթունքներովս երակներիս մէջ հոսէին...

Եւ թող խայտար նա փողոցում՝ տրորելով կայտառ ոտների տակ ձիւնը և իր թեաւոր սիրոյ պատմութիւնն անէր ինձ անհամբեր դեռ փողոցում. մինչդեռ ձին իր վրնջար անդադար խանդի մէջ և սմբակներով գետինը դղրդէր...

Եւ թող գրկանքներիս մէջ՝ հպարտօրէն մտնէր նա տունս, երգ, հրճւանք ու ցնծութիւն ծաւալէր այնտեղ. և թող տունս նրա համար գիշերներով, ցերեկներով խրախճան դառնար. նրա համար վերանար

այնտեղից մահկանացուների թուլութիւնը—քունն ու յոգնութիւնը, և այրւէր, անմահ այրւէր նրա համար՝ յաւէտ ապրելու ու վայելքների աղբիւրը քամելու տենչը...

Ա՜խ, գար, ձիւների միջով ձիու վրայ թև առած գար ինձ այսօր իմ սերը... գար և հպիւ մեր կարօտն իրար առած, նորից ձիերի մէջքին՝ արշաւասոյր դաշտերը թռչէինք... Ձիու սմբակներից ձիւնեայ փոթորիկ բարձրանար, և տարածութիւնն անվախճանանար մեր թռիչքի առջև...

Բնութիւնն ու կեանքն իր ձիւներով նոյնիսկ ինչպէսի անյագօրէն քաղցր տենչ ունի իր մէջ. և ցնծութեան ու խրախի երգը զօղանջէր մեր հոգում. թռչէինք ձիւնէ տարածութեան մէջ՝ ինչպէս սանձարձակ հողմը, մխրճէինք բնութեան ընդերքներուն մէջ և ձօնւէինք նրան, լուծւէինք նրա մէջ՝ հողմի թափով գրկախառն ու յաւիտեան անմահ...

Արիւնս յուզւում է մանդօլինի ձայնից...

Ա՜խ, գար ինձ, հեռու երկրից այսօր գար ինձ սերս՝ ձիու վրայ, ձիւների միջով, և ասպանդակները նրա շողշողային ու հպարտ բարձրանար ձիու մէջքին իրանը նրա՝ ինչպէս առասպելական մի ամազոն...

1911 հոկտեմբ.

ԱՐԱՋԻՆ ԱՆՁՐԵՎԸ

Այս գիշեր ունկնդրում էի կատուրիս վրայ իջնող արձրևի հաճոյական աղմուկը...

Վաղուց անջատած մէկ բարեկամիս ձայնն էր լսում կարծես նրանում...

Եւ այս առաւօտեան օդի փափկութիւնը, ճամբաների ցեխը, անհամար մանրիկ լճակներն ինչ-որ մատնող ու աւետող ձայներ ունին իրանց մէջ։ Ջուռաների տակ ջուրը փրփրում է, ծմաներում ընկած հատակուռ սառոյցները պարտուածի անզօրութեամբ բացել են իրենց վիրաւոր կրծքերը, և նրանց մօտի մըշտապէս սառած հողը փխրել ու մեղմել է իր դաժան ընոյթը. իսկ արձակ տեղերում առուների ջուրը գոչ-գոչում է, և նրանց ափերին՝ ցրիւ ու լքած՝ մեռնում են սառոյցի նեազած կտորները...

Աւետող ձայները ծխում են կարծես հողի, օդերի թացութեան գրկից, և մահն ու յարութիւնը գրկախառն արտասուում ու ծիծաղում են,—մէկը մեռնում, անհետանում է արցունքների մէջ, միւսը ծնւում, աճում է ծիծաղի մէջ...

Երկուսն էլ գեղեցիկ են, և՛ մահն արտասուքի մէջ, և՛ յարութիւնը ծիծաղի մէջ. երկսից էլ գեղեցկութիւն է բուրում երկրի վրայ, երկուսն էլ քաղցրութիւն են ծնում,—վշտի քաղցրութիւնն ու հրճւանքի քաղցրութիւնը...

Ու իմ սիրելեան այգում աւետող ձայները խօսում են նրա բոլոր անկիւններից. այգին համակ դորշ

է հագել, ծառերը նայում են սև, աշխուժացող աչքերով. կաղամախիների խմբակը հեռւում՝ լողացել և սպիտակ մշուշ լինի կարծես. իսկ հողաթմբերի վրայ՝ որթերի ցրիւ ու անկարգ մատները՝ սրբւել ու փայլում են իրենց ոսկեայ զգեստների մէջ...

Ինչպէս թաց են պատերի գլուխները. բարձրախոյ հացիներն իրենց չոր ու նոր փայլ ստացած տերևներով աշունն են յիշեցնում։ Արևախոյս տեղերում մնացած տակաւին թանձր ձիւները վափկել, փխրել և բիւրեղատատերի շեղջ են դառել... Եւ օտար, անջատող մի մանկան ամբողջ հմայքն ու հրապոյրն ունեն բոլորը...

Շատ բարձրերում այերն անհանգիստ շարժւում են, ու նրանց ձայնն իջնում է ներքև, որպէս հեռու ճամբաներով հեռացող կամ մօտեցող սայլերի աղմուկը... Կաչաղակները թռչում են բոլոր կողմերում անսովոր եռանդով և անսովոր բարձր—բարդիների կատարներով. նստում են նրանց ամենաբարձր ճիւղի վրայ, ունկնդրում վերևից իջնող ձայները, նայում են հեռուները և օդի միջից, բարդիների կատարներից հարիւր տեղով ձայն են տալիս իրար...

Նոր ուրախութիւն, նոր ցանկութիւններ են հընչում նրանց ձայների վրայ։ Եւ որ նրանք բարդիների բարձր կատարներից նայում են հեռուները, կարծես ճգնում են տեսնել այնտեղերից մօտեցող նոր ուրախութիւնները. եւ որ նրանք բարդիների բարձր կատարներին ունկնդրում են այերի աղմուկը, կարծես ճգնում են լսել վերևից ներքև իջնող քաղցր ցանկութիւնների ձայները...

Եւ այերի աղմուկն իջնում է կամաց-կամաց ներքև... Ծառերը մեղմով ատատանում են իրենց գագաթները, հարևան բարդիները քնքուշ չիկացնում են

իրենց ճղները... Զարթնումի առաջին շարժերն են դրանք...

Եւ ուժը վերևից կամաց-կամաց հոսում է ներքև. աւետաբերը քամին սկսում է շառաչել, և առաջին անգամ ճռնչում է հարիւրամեայ ընկուզենու վիթխարի ճիւղը... Ցնծութեան առաջին ձայներն են դրանք...

Շուտով հողմը թևարձակ կը խոյանայ ծառերի միջով, դաշտերի վրայ, կալեկոծէ նիրհը հողի գրկում, կալեկոծէ նինջը երկրի վրայ... Կալեկոծէ բողբոջներն ու սրտերն ովկիանի նման, և կեանքը կը թափահարէ իր խոպոպիքները՝ շքեղահեր մանկան նման...

1912 փետրվ.

ՍԵՌՆԱՂ ՉԱՀԷԼՈՒԹԻՒՆԸ

Յոգնած երիտասարդ աղջիկը թոյլ քայլերով առաջացաւ դէպի հարևան սենեակը և վիզը թեք՝ հազիւ կռթնեց դռան փեղկին. նա եկել էր ինչ-որ հարցնելու այնտեղ նստած իր բարեկամ երիտասարդին։ Հազիւ յոգնած ու ցրիւ հայեացքն ընկաւ թախտի վրայ կիսովի թեք ընկած երիտասարդի ուրախ, ուժեղ հայեացքին, որ մոռացաւ իր հարցը, ներքին մի ուժեղ հոսանք մեծ թափով անցաւ ողջ մարմնով և աչքերի առաջ շաղուեցին։ Յոգնութիւնը դրել էր նրա դէմքին մարմրած ու տարտամ մի արտայայտութիւն, և մազերն անփութօրէն կախկխուած էին երեսների վրայ։ Դեռ երբէք չէր տեսել երիտասարդը նրան այդպիսի հայեացքով, և ընդդիմանալով վեր հանելով թևերը, լռութեամբ իր մօտ կանչեց նրան։ Երիտասարդ աղջիկն առանց մի վայրկեան իրան հաշիւ տալու, մի երկու խոշոր քայլ արաւ և իր մարմնի ամբողջ յոգնածութեամբ արդէն երիտասարդի կրծքի վրայ էր, թևերը տարտամօրէն կախուում էին նրա պարանոցից և դէմքը սեղմուում էր կրծքին... Մի վայրկեան թմրած գիտակցութիւնը կարծես պատրաստուում էր զգաստանալ, որ երիտասարդի ջերմ համբոյրը նորից հարբեցրեց նրան, ու նա աչքերը փակեց իրան ողողող քաղցր հաճոյքի մէջ։ Որքան աւելի պիրկ էր խորտուում իր մարմինը երիտասարդի ուժեղ թևերի մէջ, այնքան աւելի նրանում մթնում ու հեռու էր փախչում գիտակցութիւնը և հաճոյքի քաղցր հոսանքն այնքան աւելի ու աւելի

յորդ ողողում էր իրան։ Արեան ալիքի բուռն մի թռուիչք յանկարծ ուժգնօրէն ուռցրեց նրա կուրծքը, ու կիրքի խենթ մոլուցքի մէջ՝ թևերով պիրկ սեղմեց երիտասարդի պարանոցը և բորբոքւած այտերը թափով դնում էր նրա շրթունքների վրայ հեալով։ Մի քանի վայրկեան անց ագահութեամբ վայելում էր նա աղջկական անձնատուրի հաճոյքը. ապա թւում էր թէ ընթանում է ոլորապտոյտ մի մշուշի մէջ, զգում էր կարծես, որ իր մէջ են հոսում տիեզերքի բովանդակ քաղցրութիւնները, և կիսախուփ աչքերով շշնջում էր անդադար... «Ա՜խ, ինչ քաղցր է, ինչ քաղցր...»։

Մի քանի բոպէից յետոյ, երբ իջել էր արեան բուռն ալիքը և հանգել կրքի խենթ մոլուցքը, նա դրել էր զովացած գլուխը երիտասարդի կրծքին, շշնջում էր տխուր ու հազիւ լսելի.

—Ինչո՞ւ արի ես. այդ ի՞նչպէս եղաւ... Զէ՞ որ դու իմ եղբայրն էիր։ Երբ մեր տանն էիր լինում դու, կամ ինձ հետ՝ որևէ տեղում, ես մոռանում էի, որ դու հեռու տեղից եկած մի օտար երիտասարդ ես ինձ համար։ Քո մարմնի շփումն իմին այնքան հարազատ էր, որ իմ մէջ սաստկացնում էր դէպի քեզ միայն քրոջական սէրս... Այնպէս, այնպէս քաղցր ու թանգ էր ինձ համար քո եղբայրութիւնը...

Ու սեղմում էր իր այտն աւելի ամուր նրա կրծքին. կարծես թէ այնտեղ անհետանում էր իր համար թանկագին ու սրբազան մի բան...

Նա՛ւը այդպէս,—շշնջում էր նա շարունակ,—պահիր այդպէս քո ձեռքն իմ կողիս վրայ, որովհետև այժմ ես դարձեալ ճաշակում եմ քո եղբայրութեան հաճոյքը։ Զշարժուես. վախենում եմ, որ նա կրկին անհետանայ, իսկ նա այնքան քաղցր ու թանգ է ինձ համար...

—Ինչպէ՞ս գեղեցիկ էր առաջ. պայծառ յիշում եմ. երբ տեսնում էի քեզ, իմ մէջ մանկութիւնս էր զարթնում. ես կայտառ խաղում էի, կարծես հրեշտակներն էին խայտում իմ մէջ և ինձ էին տալիս իրենց ջինջ ու մաքուր հայեացքները, որոնցով ես նայում էի քեզ վրայ և աշխարհի վրայ... Եւ անսահման գեղեցիկ էր աշխարհն իմ այս հայեացքների տակ. քո գլուխը պըճնում էին անտառային մանուկների ճոխ գանգուրները, ձայնդ հնչում էր ինձ համար ինչպէս ժայռերից թռչող վտակի կուսական երգը։ Իսկ հովիտներն առատօրէն ցնծութիւն էին բուրում, նրանց մարգագետինները թեթևութիւն ու թռիչք էին հաղորդում ոտներիս և հրճւանքի կանչեր էին դնում ձայնիս վրայ...

—Ա՜խ, եթէ այս բոլորն անցած լինի և այլևս չդառնայ, արեգակի գոյներով վառող բիւրեղեայ հոյակառոյց դղեակը կը խոնարհուի, որ այլևս երբէք, երբէք չի կանգնի, և երկրի վրայ կործանւած կը լինի գեղեցկութիւնը... Ա՜խ, մի՞թէ սա կը լինի... Սիրտս դողդողում է, կարծես ցրտի սարսուռն է ճնշում նրան...

Ու գրկում էր երիտասարդին աւելի ամուր, փակում աչքերը նրա կրծքի վրայ, ուզում էր լաց լինել և լաց չէր լինում...

—Դու այնքան շատ բաներ գիտես. ինչպէ՞ս կենդանի պատկերացնում եմ, երբ դու ամառը՝ ծառերի տակ, ջրերի մօտ, կամ ձմեռը՝ տաք ու լուսաւոր սենեակում պատմում էիր այրերի կաքաւող աղջիկների մասին։ Մէկն այդ պատմութիւններից տպրում է իմ մէջ միշտ կենդանի, որովհետև ճակատագրական մի տխուր զգացում է զարթեցրել նա իմ մէջ ու բոլոր կուսական աղջիկների երգը լինի կարծես... Այս պատմութիւնը ասվորել եմ ես ճիշտ այն խօսքերով, որ դու

ես պատմել և մի տարում երեք հարիւր վաթսուն անգամ նրան պատմել եմ ինքս ինձ՝ ճիշտ նոյն խօսքերով, նոյն ձայնով և նոյն շարժումներով։

—«Հզօր լերան անմատչելի կրծքին՝ գետի վրայ՝ բացւում էր մշտաթարմ աղջիկների այրը։ Նրա մուտքը պսակաւորում էին վայրի մշտադալար ծաղիկները։ Այրի ներսում երկիրը բուրում էր իր անուշհոտութիւնները, և այնտեղ նւագում էին նրա ձայներից ամենաներդաշնակները։ Առաստաղից կախ՝ իջնում էին տաք ու մշտապէս բուրաւէտ մամուռէ անկողինները, գիշերներն այնտեղ հազար գոյներով լուսաւորում էին բիւրեղեայ ջինջ ակները և հնագանդ մողէսների ֆոսֆորեայ աչքերը...

«Ամեն առաւօտ մշտաթարմ աղջիկներն իրենց մամուռէ անկողիններից թեւածում ու այրի զզզուն արձագանքների մէջ սաւառնելուց յետոյ՝ իջնում էին խայտառոս գետի փրփրուն ալիքների վրայ, խաղում էին, թրջում նրանցով իրենց ջինջ ու բուրաւէտ մարմինները և գետի ափին՝ ծաղիկների ու խոտերի վրայ՝ կաքաւում էին իրենց նրբին ոտիկներով անթառամ, մշտադալար ջահէլութեան պարը։ Դալարում էին նրանց ոտները, որոնց թեթեւութեան տակ խոտն աճում ու բարձրանում էր. նագում էին նուրբ իրանները, որ իրենց կողերի անծուութեան մէջ գետի ալիքներն էին անդրադարձնում. հեզօրէն թեքւում էին նրանց գլուխներն ու խաղում վարսերը, որ երգ և քաղցր հնչիւններ էին ծխում դէպի վեր... Այդպէս կաքաւում էին մշտաթարմ ջահէլութեան պարը մշտաթարմ աղջիկները՝ գետի ափին, դալար մարգագետնի վրայ...

«Մի օր մէկը նրանց քոյրերից իր հեռաւոր թռուիչքից հազիւ հասաւ գետի ափին և ծանրացած վայր ընկաւ։ Քոյրերը երգելով շրջապատեցին նրան և ողբացին իր թեւերի ու թեթեւութեան կորուստը... Նա պառկած էր ծանր ու կրկնում էր. «Ի՞նչ քաղցր է մեղքը»։ Քոյրերը նրան թեւերի վրայ հանեցին այրը և դրին իր մամուռէ անկողնի վրայ...

«Այլևս նա չէր թռչում իր քոյրերի հետ գետի ափը և չէր պարում մարգագետնի վրայ մշտաթարմ ջահէլութեան պարը։ Նրա կողերն այլևս անբիծ չէին և չէին անդրադարձնում իրենց մէջ գետի ալիքները։ Թռչող տարիների հետ արագ ծերացաւ նա, մեռաւ իր մամուռէ անկողնում, չորացաւ ու զմռսւեց այրի բուրմունքների մէջ...

«Այրի երգերն ու հնչիւններն օրօրում են նրա անկողինը, բայց նա անզգայ է դրան և գետի ափին թռչող մշտադալար ջահէլութեան պարին...

«Ի՞նչ քաղցր է մեղքը», հնչում էր քոյրերի ականջին իրենց մեռած քրոջ խօսքը, և տարիների հետ նրանք բոլորն էլ մէկ-մէկ ճաշակեցին մեղքի քաղցրութիւնը, ծանրացած ու թեւաբեկ վար ընկան գետի ափին, ծերացան ու մեռան իրենց մամուռէ անկողինների վրայ...

«Գետի ափին դադարեց մշտաթարմ ջահէլութեան պարը, այրի բերանը պսակող ծաղիկները թառամեցին, ու հողմերը ներս սուրացին այնտեղ...

«Մինչև այսօր էլ այրի առաստաղից կախ են մամուռէ անկողինները՝ մշտաթարմ ջահէլութեան պարը կաքաւող աղջիկների չորացած ու զմռսւած մարմիններով։ Եւ նրանց օրօրում է այժմ՝ այրի ներդաշնակ ձայների փոխարէն, դաշտերի ու լեռների վայրագ քամին. . .

«Հսկայ լերան անմատչելի կրծքին բացւած է այրի բերանը՝ անդարդ ու անպսակ. նա մշտաթարմ

ջահելութեան գերեզմանն է, որ մնում է այնտեղ՝ սըբբազան, մատչելի միայն վայրի հողմերին...»։

—Յիշում ես այդ։ Ես սովորեցի նրան հէնց առաջին անգամ, որ պատմեցիր դու՝ այնքան տխուր և քաղցր իր տխրութեան մէջ։ Ճիշտ քո խօսքերով պատմեցի, այնպէս չէ՞։ Գիտե՞ս, ես այժմ այնքան, այնքան շատ սիրում եմ մեղքից թառամող ու մեռնող աղջիկներին և այն մշտաթարմ ջահելութեան գերեզմանը...

Արցունքները կարծես թէ յայտնուեցին աչքերում. նա կրկին ծածկեց դէմքը երիտասարդի կրծքի վրայ ու մի քանի վայրկեան լսում էր իր սրտի զարկերը...

—Գիտե՞ս, սիրտն էլ կարող է լինել մշտադալար ջահելութեան գերեզման. իմ սիրտս կարծես թէ ծածկուում է փափուկ ու թեթև մամուռով և ճօճում է։ Դա օրօրանն է. իսկ նրա մէջ մանկութեանս և անմեղութեանս երգերի բոյրով զմռսուում է ջահելութիւնս... Եւ սիրտս մերկանում է իր ծաղկեայ պսակներից, բուրմունքներից ու շողացող ակներից... Այնտեղ ճօճում է հիմա ջահելութիւնս, այնպէս չէ՞... Ես ճաշակեցի մեղքը և քաղցր, քաղցր էր նա ու ջահելութիւնս թաւրեկուեց, վայր ընկաւ ու մեռաւ... Մշտաթարմ ջահելութեան գերեզմանում ցուրտ ու վայրագ հողմերն են թռչում. նրանք են ճօճում մեռած քոյրերի անկողինները։ Իմ սրտումն էլ այսուհետև լոկ անցեալի յուշերը կը մնան. նրանք ցուրտ կը լինեն ու վայրագ, և իմ սիրտը կը ճօճեն իրենց պաղ թևերով... Ա՜խ, ինչպէ՞ս, ինչպէս տխուր է. այնպէս քաղցր ուզում եմ արտասուել...

Ու գլուխը սեղմած երիտասարդի կրծքին, արտասուում էր նա դառն ու երկար...

—Թափիր, թափիր արցունքներդ առատօրէն,—

խօսում էր այժմ երիտասարդը,—այդ արցունքներդ նոյնքան երջանիկ են, որքան երջանիկ էին ջահելութեանդ երգերը... Ջահելութիւնդ նրանով էր այնքան քաղցր ու եթերային, որ իր ուրախ երգերով, անհոգ թռիչքով դիմում էր դէպի քաղցր մեղքը, որ իր անմահութեան վախճանն է։ Եւ չկայ մշտաթարմ ջահելութիւն. այն մի անգամ եղել է հէքեաթի մէջ, այն էլ նրա անմահութիւնը կաքաւող աղջիկները բոլորն ընկել են մեղքի քաղցրութեան մէջ, թառամել ու մեռել...

—Այժմ ինչքան քաղցր կը լինեն քո արցունքները ջահելութեանդ գերեզմանի վրայ։ Յորդ արցունքներից յետոյ ամեն անգամ քեզ կը համակէ մեղքի քաղցրութիւնը, որ այդ քաղցրութիւնից յետոյ դառնագին ողբաս կորած ջահելութիւնդ և կրկին աչքերդ փակես մեղքի քաղցրութեան թովչանքի մէջ... Այդ է կեանքի քաղցրութիւնն, իմ նազելիս...

—Երբ ես գալիս էի քեզ մօտ անտառային մանուկների ճոխ գանգուրներով և լեռնային վտակի կուսական երգերով,—ես մանուկ էի և քո եղբայրը։ Եւ ջահելութեան վայելքներին տրուած քո սիրտն անյաղ ծծում էր գանգուրներիս բուրմունքն ու ձայնիս կուսական մաքրութիւնը... Դա մշտաթարմ ջահելութեան պարն էր, որ կաքաւում էինք մենք գետի ափին՝ մարգագետնի վրայ... Հասաւ և երկար թռիչքն անծանօթ վայրերով. մենք թեաբեկ վայր ընկանք գետի ափին՝ ծանրացած մեղքի քաղցրութեան մէջ... Այժմ փուում է փափուկ օրօրանը, որ պիտի ճօճէ մեզ քաղցր մոռացումների մէջ...

—Առաջ ես գալիս էի քեզ մօտ՝ որպէս եղբայրդ. իմ ներկայութիւնն ու մարմնիս շփումը քո մարմնիդ՝ քո մէջ սաստկանում էր միայն քրոջական սէրդ դէպի ինձ։ Իսկ այսուհետև ես կը գամ քեզ մօտ՝ որպէս

ամուսինդ, իմ ներկայութիւնն ու մարմնիս շփումը քո մարմնիդ՝ երակներիդ մէջ կը վառէ արեան ջերմութիւնը և հոգիդ կը թաթախէ մեղքի քաղցրութեան մէջ... Այսուհետև դու ինձ հետ չես վազվզի մարգերի վրայ և չես հրճւի՝ լոկ գանգուրներս տեսնելով ու ձայնս լսելով, այլ թևերիդ ուռճացած մկաններով պիրկ կը գրկես պարանոցս, կրծքովդ սեղմ կը կպչես ինձ, կը ծծես մարմնիս բուրմունքներն ու հիւթերը և կը ցնցես, կը պարարես քեզ մեծ, ուժեղ վայելքներով... Այսուհետև ես քո ամուսինն եմ...

Աղջիկը բացում էր աչքերը դէպի վեր՝ երիտասարդի դէմքին՝ արցունքի մէջ ժպտալիս։ Նրա մազերն անկարգ խռնուում էին երեսների վրայ և այտերը լցւում էին արեան ուժեղ հոսանքով...

—Այժմ դու իմ ամուսինն ես... շշնջում էր նա անլսելի, բայց քաղցր մի փսփսուկի մէջ... Առաջ դու իմ եղբայրն էիր, իսկ այժմ իմ ամուսինն ես... Ամուսինն... քաղցր է կարծես՝ ինչպէս եղբայրը... Եւ այժմ ես պէտք է հոտոտեմ քո գանգուրները՝ նայելուս փոխարէն։ Եւ այժմ ես կարող եմ ամուր սեղմել քո կրծքին. դու կը համբուրես ինձ, իսկ ես աչքերս կը փակեմ երջանկութեան մէջ... Ինչպէս կարմիր ու հիւթեղ են շրթունքներդ, որ մինչև այսօր չէի տեսել։ Այժմ ինչպէս տաքանում եմ ես քո գրկում և ձեռքիդ շփումն ինչպէս ուրախութիւն է ցնցուղում հոգուս մէջ...

Եւ թևերով դարձեալ պիրկ փաթաթեց նրա պարանոցին, սողաց վեր կրծքով և բորբոքւած այտերը կրկին կրքի խենթ մոլուցքով սեղմեց նրա շրթունքներին...

—Ա՛ռ, ա՛ռ ինձ քեզ. դու իմ ամուսինն ես։ Փաթաթիր ինձ քո ուժեղ գրկանքներիդ մէջ և թող համակէ ինձ նորից մեղքի քաղցրութիւնը... Ինչպէս յաւիտեան քաղցր է մահուան ճանապարհը... Իմ սիրտն այժմ ջահելութեանս գերեզմանն է, որ մամուռէ անկողնով ճօճում ու մեղքի քաղցրութեան մէջ տանում է ինձ դէպի մահը... Ա՛ռ, ա՛ռ ինձ քեզ ամբողջովին. ինչպէս յաւիտեան քաղցր է մեղքը մահուան ճանապարհին...

Դարձեալ մի քանի վայրկեաններ անյագօրէն ճաշակում էր նա աղջկական անձնատուրի հաճոյքը. ապա թւում էր թէ լողում է շոյագրգիռ յորձանուտ մի մշուշի մէջ, երակներում թափւում են տիեզերքի բոլոր քաղցրութիւնները, և աչքերը խուփ՝ շշնջում էր՝ «Ինչ քաղցր է, ինչ քաղցր է»...

1911 հոկտեմբ.

ԹՈՎՉԱՆԴԸ

Նորեկի աչքերով դիտում էի իմ ծանօթ քաղաքի փողոցները. թարմ ու գեղեցիկ տարիներս էի ապրել այնտեղ, երբ պայծառ թռիչքներն էին զարդարում իմ հոգին ու շքեղ երազներ էին վառւում աչքերումս։ Եւ այժմ արիւնս եռում էր վաղեմի քաղցր յուշերով, հոգուս գորովանքն ուռչում ու լցնում էր կուրծքս։ Փայփայելու ցանկութիւնս տոչորւում էր, և զգում էի կրծքիս տակ գգւանքների ախորժ խտիտները...

Երբ կանգնել էի ծանօթ մի տան անկիւնին՝ տարւած յիշատակներիս հաճոյքով, տեսայ փոքր ինչ զառիվայր փողոցի ներքևից բարձրանում էր մի կին. հայեացքս անհասկանալիօրէն բևեռւեց նրան և մտքիս մէջ ամէն բան կարծես փաթաթւեց մշուշով։ Յամր ու հանդարտ բարձրանում էր կինը և քանի մօտենում, այնքան աւելի խռովում էր միտքս։ Երբ իր դիմագծերը պարզ եղան ինձ, ես տեսնում էի շատ ծանօթ մի զոյգ աչքեր, որոնց յեռեից զարթնեցին ծանօթ քայլւածքը, մազերի ծանօթ հիւսւածքն ու հասակը։

Դա այն աղջիկն էր, որ տարիներ առաջ ամենայն օր գրքերով կանցներ ու կը դառնար իմ պատուհանիս դիմացի մայթով։ Քաղցր էր ինձ համար՝ ամէն օր սպասել նրա յայտնւելուն, տեսնել իր միշտ նոյն քայլւածքը, նայելը դէպի սենեակս, փոքր ինչ շփոթւելը և անցնելն ու անյայտանալը։ Այն ժամանակ թւում էր ինձ, որ ես սիրում եմ նրան, որ նա գիտէ այդ և ինքն էլ սիրում է. թւում էր ինձ, որ առանց

մի խօսք լսելու իրարից, մենք բարեկամներ էինք և այնպէս լաւ ճանաչում էինք իրար...

Սա ուրեմն այն աղջիկն էր, այն կարճահասակ, կլոր աչքերով և մի ոտքից կարծես փոքր ինչ կաղ քայլւածքով աղջիկը, որին ես սիրել եմ մի ժամանակ և որի բարի աչքերն արդէն սկսել էր աղօտել իմ մէջ տարիների տարածութիւնը...

Բայց այդ ինչպէս բարձրացել է նրա որովայնը, հագուստը լայն և ընթանում է այնպէս հանդարտ ու անխռով։ Խանդաղատանքս ուժգին թափով շարժւեց իմ մէջ. այժմ նա այնպէս կը կարօտի գուրգուրանքների, քնքուշ փայփայանքների։

Երբ արդէն մօտ էր և իր ծանօթ, բարի ու կանչող աչքերով ինձ էր նայում շեշտակի ուրախութեամբ, ես սրտիս ուժգին հրճւանքով նրա մօտ վազեցի, ձեռներն առնելով անխօս, ծածկեցի գորովալից համբոյրներով և աչքերս փակած՝ մի վայրկեան դրի ափերիս մէջ առած նրա ձեռների վրայ, և սիրտս թափեց բերկրանքի ու ափսոսանքի արցունքներս...

Քնքշաբար գրկեցի իրանը, և իր որովայնի մերձութիւնը կողերիս՝ ծնեցնում էր իմ մէջ անթիւ քաղցրութիւններ, որոնց ես մէկիկ-մէկիկ կուզէի հանել իմ սրտից և ձեռքերիս բոլոր կարողութեամբ տալ նրան... Ինչքան քաղցր բան է պտուղը... Երբ ես սիրում էի այդ աղջկան, գիտէի, որ նա քաղցր պտուղն իր վրայ կրող ծառն է, գիտէի և այնպէս տենչում էի տեսնել նրան՝ զարդարւած իր պտղով։ Ա՜խ, ինչպէս տարօրինակ կերպով բեղմնաւորելու շնորհը կարծես ամբողջովին թափւում էր նրանից և ես նրան սիրում էի կարծես ամենից աւելի դրա համար... Եւ ահա այսօր զարդարւած է նա իր պտղով, քաղցր պտղով, որ սեղմւած ահա իմ կողիս, խանդաղատանքս է դրգռում, ու

քնքուշ, մխիթարիչ համբոյրներիս փթթումն է արծարծում իմ մէջ...

—Դու, իմ վաղեմի քաղցր բարեկամս. քո յստակ հայեացքով այժմ կանգնած ես իմ առաջ. կանգնած ես՝ գեղեցկացած քո պաղով և այդ լայն զգեստիդ միջից նայում է որովայնիդ ու կոնքիդ մայրութեան աչքը։ Ես քեզ այժմ սիրում եմ երկու բիւր անգամ աւելի, քան այն ժամանակ, երբ ինձ համար դու դեռ բեղմնաւորող մի շնորք էիր։ Ես քեզ սիրում եմ այժմ հայրութեան զգացմունքով... այդ միևնոյն է, քո մայրութեան անդորրութիւնդ իմ առաջ՝ զարթեցնում է հայրութեան կարողութիւններն ու գորովանքները, որովհետև մի ժամանակ անթիւ անգամներ ես նրանց փայփայել եմ իմ կրծքի տակ, երբ անթիւ անգամներ նայել եմ քո յետևից՝ քեզանից թափուող բեղմնաւորելու շնորքիդ... Դիր ուսիս մայրութեան յոգնածութիւններով ծանրացած գլուխդ, և թոյլ տուր ինձ բռնել ձեռքդ՝ սնուցող, առատագութ որովայնիդ վրայ... Եղիր անսահման զոհաբերող դէպի ինձ. չե՞ս տեսնում՝ ինչքան հարազատ է իմ սէրս դէպի քեզ. չե՞ս տեսնում՝ դու ինչքան աւելի շտապել ես ու բախտաւոր ես, իսկ ես ուշացած ու բախտազուրկ։ Վաղն արգանդիդ պաղով դու կը զարդարես քո տունն ու կը հրճուես նրանով, իսկ ես հեռու կը լինեմ ու չեմ տեսնի քո բախտաւորութիւնը. չե՞ս զգում՝ ինչպիսի դառը կարօտ կը վառուի իմ սրտում...

Երբ նրա իրանն իմ գրկիս մէջ բարձրանում էինք փողոցով, նա շշնջում էր ինձ ափսոսանքի ու սիրոփանքի քաղցր խօսքեր... —Դու հեռացար տարիներով՝ առանց իմ կանչող աչքերիս մի խօսք ասելու. դու կրում ես քո մէջ մի վշտացած սիրտ և նրա ձեռքից դաղարգիւն ես աշխարհի վրայ. քո սրտիդ վշտերը շատ հաբազատ են ինձ, և ափսոս, որ նրանք պիտի մնան ինձանից հեռու. այդ սիրտդ ճանաչում էի ես դեռ այն ժամանակ, երբ տեսնում էի ինձ ուղղած քո առաջին հայեացքները... Բայց մի կշտամբիր ինձ, որ մայրութեանս շնորքներն աւելի երկար չսպասեցին ու չակընկալեցին քեզ, որովհետև նրանց համար իրենց ջահելութեան շուքով բեղմնաւորելն է առաւել կարևոր... Գնացիր խաղաղութեամբ և քաղցր յիշատակներով...

Եւ իր զոյգ փափուկ ափերով նա քաղցր շոյեց իմ զոյգ այտերս ու պահեց այնպէս, մինչդեռ ես վերջին կարօտի համբոյրս էի դնում նրա լայն ու խոնուն ճակատին...

Երբ բաժանւում էի, կրկին բռնեցի նրա ձեռները, համբուրեցի և ափերիս մէջ՝ սեղմեցի նրանց փակած աչքերիս...

Մաքիս մէջ հեղուում էր նրա բեղմնաւորելու շնորքի ու մայրութեան թովչանքը և անդարձ հեռու էի նրանից...

1911 Նոյեմբ.

ԱՐԻԵՅՈՒՄԻ ՊԱՐԸ

Ես պարի ոչ մի դաս չեմ վերցրել և ոչ իսկ կեանքումս մի անգամ պարել։ Բայց այն օրը, բազմամարդ հանդէսին, ես բազէի պերճութեամբ և նրա թռիչքի սրութեամբ՝ զարմանքից լայն ու անշարժ աչքերի ծովի մէջ՝ պարեցի իմ արբեցումի առաջին պարը...

Երբ անհոգ ժպիտով կանգնած դիտում էի պարողների շնորքը, յանկարծօրէն, արձի խոյանքով հրապարակի վրայ սուրացող նօճեհասակ կինը մէկէն խլեց ժպիտս և արձանի պէս անշարժ՝ կանգնեցրեց սրտիս զարկերը... Դրախտային բոլոր թովանքները կնտրուկի անուշ ծխի պէս բարձրանում էին վեր նրա նրբաշուք մարմնի առատաձիր խաղերից։ Աչքերս կախարդուածի նման չարաչար ձգձգուում էին իրենց վանդակներում՝ գրկելով նրա թևերի, իրանի, գլխի ու շնորհագեղ ոտների դիւթիչ խաղերը. իր պարի շնորքն ու արուեստը կարծես թափանցում էին իմ մէջ, և ես վառուում էի՝ նրա սաւառնումների շուրջը սրընթաց պտտուելու տենչով. արդէն իսկ պատրաստ էի մի րոպէ՝ պարի հրապարակը նետել ինձ, երբ նա իջեցրեց իր թևերն ու մեկուսացաւ հանգստանալու։

Այնուհետև պարի հրապարակը շահատակում էին գաճաճները, և ամենքի աչքերի հետ միասին, իմ աչքերս էլ հանգչում էին սաւառնումից իջած ճերմակագեստ արձի վրայ. և իմ սիրտս էլ՝ ամենքի ձայնների հետ՝ նրա պարի խոյանքներն ու ոտների ճեմախաղն էր ցանկանում. իսկ նա նստած էր մեկուսի

անշարժ՝ փաթաթուած շարղալի իր սպիտակ թևերի մէջ, և լինէր ստուն, ինչպէս սառոյց. պարելու բոլոր հրաւէրներին նայում էր նա միևնոյն պաղ ու անխօս հայեացքով։

Ա՜խ, ես այնպէս լաւ հասկանում էի նրա սառցեղէն հայեացքը. նա ոգի և կեանք էր փնտռում պարող երիտասարդների խաղի մէջ, մինչդեռ նրանք պարի չոր, անկեանք ձևերն էին անում, ու նա մնում էր ստուն, արձանի պէս անշարժ՝ կրկին ու կրկին հրաւէրներին և բազմութեան անվերջ կանչերին...

Իմ արիւնիս յուզմունքը բարձրանում էր աչքերիս մէջ, նրա իսկ պարի արուեստով ու շնորքով կարծես խաղ էին առնում ոտներս ու թևերս, և հրապարակը նետուելու, արձանի պէս կանգնած արձի սառցէ անշարժութիւնը ցնցելու տենչը բորբոքում էր հոգուս մէջ։ Նրա մարմնի շքեղութիւնները կրկին տեսնելու, նրա աչքերի արհամարհանքն ընկճելու և ապա իրան իմ հիացմունքներս ու պաշտամունքիս խօսքերն ասելու արբեցումիս մէջ յանկարծ՝ մրրկի պէս սրընթաց՝ պարի հրապարակը նետուեցի։ Ոտներիս մէջ կարծես հազարամեայ ուժ էր հոսում, և պատանեկան թարմութեան շքեղ դալարիները հաղորդում էին նրանց անթիւ խաղեր, հոյակապ, պարթևական ստեղծումներ։ Երբ արքայական պտոյտներիս մէջ առաջին անգամ ոտներիս խաղն առնիը փռեցի հպարտ ու սառցեղէն արձին և վրան տարածեցի հայեացքիս հզօր փայլն ու տենչանքը,—տեսայ իր աչքերի մէջ շարժուող այլայլումը և գեղաթուրմ իրանի նրբին տատանումները... Յաղթանակողի վեհութեամբ կրկին իմ շքեղ պտոյտներիս գնացի և ճաշակեցի բազմութեան աչքերի մէջ նստած հիացքը, առաջիկայի համար տոչորուող հետաքրքրութիւնը...

Երբ միւս անգամ էլ հպարտ արծուի առաջ կանչելու իմ պարն էի պարում, ոտներիս խաղից աւելի, ես նրան ցոյց էի տալիս հոգուս հրդեհի բոցավառ ալիքները և աչքերով նրան կանչում էի իմ հոգում... Երբ իր հոգու նուազանքը երևաց աչքերում և կուրծքը նետուեց առաջ, ես բաղէի իմ թափով խոյացայ մի շրջան և թռիչքիս մէջ մի շքեղ պարով յափշտակեցի ու հզօր ձեռքովս նետեցի ես նրան պարի հրապարակը, ինչպէս կը նետէր Աստուածն իր ստեղծած աստեղեայ համակարգութիւնը տարածութեան մէջ՝ լողալու ու շողալու աստուածային ներդաշնակութեամբ...

Կրկին ես հիանում էի արծուի նրա շքեղ խոյանքներով, կրկին տեսնում, ճաշակում էի բազմութեան հիացմունքն ու զարմանքը, և իմ ոտներիս հազարամեայ ուժով, պատանեկան թարմութեանս նուրբ դալարներով կախարդական անթիւ թալիսմաններ էի հիւսում նրա շուրջը և հրապուրում, կանչում, բերում էի նրան թալիսմաններիս ցանցի մէջ... Երբ իմ հզօր թեով նրա թովչալից իրանը գրկած թռցնում էի արբեցութեան մշուշի միջով ու զգացի վրաս իր նազանքի ծանրութիւնը,—բազմութեան որոտալից ծափերի մէջ դրի նրան աթոռին, և երանութեան մէջ գինովի իր ականջներին այնուհետև հնչեցրի իմ ձայնիս ու խօսքերիս դիւթիչ նուազները.

—Հեռուներէն միշտ ճամբայ են ընկնում մեր բախտերն ու տենչալից ուրախութիւնները... Մինչդեռ լեռների կատարներով, ծովերի վրայով ու քամիների միջով թեաբախ նրանք դէպի մեզ են արշաւում, մենք յաճախ, ով գիտէ, տրտմում ենք անբախտութեան մէջ... Ո՞վ գիտէ՝ դու որտեղից և երբ ես ճանապարհ ընկել՝ պարելու այս հանդիսին, իսկ մինչև այդ, ես, ով գիտէ, ինչքա՜ն եմ արտմել ու լացել իմ վշտերիս

մէջ... Ես լացել եմ, մինչդեռ դու այդ միջոցին թռչում ու բերում էիր ինձ անբաւ բախտաւորութիւն, վայելքների ուժգին արբեցում... Մինչդեռ ուրիշների շնորքի առաջ ես նախանձս ու անշնորքութիւնս էի լալիս, դու իմ կոպիտ մարմնի համար բերում էիր պարի ստեղծագործող ուժն ու թարմութիւնը... Ո՞վ դու, որ այժմ այդպէս երանում ես իմ սիրոյ խօսքերի շոյանքների տակ՝ փաթաթուած այդպէս չարդաթի քո սպիտակ թևերի մէջ՝ չգիտես այժմ էլ, թէ սիրոյ ինչպիսի մի անսահման թագաւորութիւն է կերտուում իմ կրծքի տակ քեզ համար, ինչպէս և չգիտէիր քեզ յափշտակող պարիս հրահրումներն իմ հոգում, երբ կանգնած քո սառցեղէն անշարժութեան մէջ՝ դառնութիւն էիր թափում աչքերիցդ՝ գաճաճ ու ձևերի մէջ մեռած պարերի վրայ... Ա՜ռ անուշս քեզ և զարդարիր սէրդ նրա անանց զեղեցկութեամբ... Գիտե՞ս դու արդեօք, որ հեռու տեղերից միշտ թեաբախ արշաւում են դէպի մեզ մեր բախտերը՝ բերելով իրենց հետ յաճախ արբեցումի պարեր... Ա՜խ, բոլոր բախտերից գերազանցն է արբեցումի պարը, որ վայելեցի ես այսօր... Եթէ չես ճաշակել, ճաշակիր՝ մոռանալ աշխարհն արբեցումի մէջ և պարել ստեղծագործող պարը...

—Այժմ ինձ յափշտակում է քո արծուային զեղեցկութիւնդ,—այդ նօճի հասակդ ու թովիչ ոտներդ... Տար ինձ քեզ հետ, թող միշտ ինձ հետ լինի քո զեղեցկութիւնը, որովհետև նրա առաջ ես մոռանում եմ զգաստութիւնս, և հոգիս պարում է մոռացումի պարը... Ա՜խ, զգաստութիւնը, յոգնել ու տանջուել եմ նրանից, ու տենչում եմ բոլոր հոգուս մոռացումի պարը... Տար ինձ քեզ հետ...

1911 նոյեմբ.

ՓԼԱՏԱԿՆԵՐԻՑ ՎԵՐ

Հոգուս մէջ մերթ յորդ վտակի պէս բարձրանում է կարեկցութիւնը... Եւ լի ուժով նետւում եմ դէպի ընկածներն ու թշուառները։ Ցանկանում եմ նրանց անարգանքի ու ամօթի հետ անցնել հրապարակներով, ցոյց տալ ամենքին իմ մտերմութիւնը նրանց, և աշխարհի առաջ ծառայել ու սիրել նրանց... Ինչպէս դա կըսփոփէ հոգուս փոթորիկը, ինչպէս անդորը ինձ նայել կըտայ աշխարհի վրայ...

Մի անգամ կարեկցութիւնս զարթնեց մի հասարակաց աղջկայ աչքերի առաջ. նստել էր նա զարդարուն ու հանդարտ՝ իր աթոռին։ Տեսայ իր խաղաղ աչքերը՝ լայն բիբերով, որ մեղմօրէն կախուեցին ինձ վրայ... Տարօրինակ յանկարծակիութեամբ խօսեցին նրանք իմ հոգուն, և ափերս նոյն րոպէին լի զգացմունքով աւելի սեղմեցին իր ձեռներն ազդրերի վրայ։ Ինչպէս անսահման անձնուէր էր նա. թւաց ինձ, որ ամեն ինչ նա պատրաստ է տալ ինձ, և իմ մէջ էլ ծնուեց ցանկութիւն՝ տալ նրան ամենաթանգն իմ գանձերից...

Մօտեցայ, սեղմուեցի կրծքին. հիւանդի պէս կրաւորական էր նա. թւում էր, թէ ինքը բոլորովին չի սիրում, և միևնոյն է իր համար՝ սիրել թէ չսիրել։ Սակայն բիբերի մէջ ինչ-որ արտասուող ցաւ էի տեսնում, և երևում էր ինձ՝ մութի մէջ գօսացած տունկերն են ուղղում իրանց մէջքը՝ արևի տակ, ջրերի ափին.—Թող սիրելու կամքն ունենայ սա. ինչպէս լայն

է իր կուրծքն ու բարձր։ Թող իր թևերն էլ բարձրանան գրկելու և կուրծքն առաջ նետուէ սիրելու։

Ու թևերիս բոլոր ուժով փաթաթուեցի նրա մէջքին, հուր կրակներով սեղմուեցի կրծքին՝ ճգնելով կարծես զարթեցնել այնտեղ հէնց նոր անգգայ քնի մատնուած մի թանկագին էակ.

—Սթափուիր, տես ինչպէս ուժով դէպի քեզ եմ գալիս ես, տես, ինչպէս ուժգնութեամբ վազում է արիւնս երակներիս մէջ քեզ համար։ Լից աչքերդ հրճւանքով և թևերդ՝ սիրոյ բուրմունքով։ Փթթիր, բացուիր, գունեղացիր և թող որ սիրեմ քեզ մարդկայնութեանս բոլոր ուժով։ Թող մարդկայնութիւնս յորդ առուակներով հոսէ քո մէջ, և այնտեղ յառնեն փլատակների տակ նիրհող հոգուդ վեհութիւնները և սաստկօրէն ծարաւին իմ սիրոյն...

—Ամենայն օր դու զուգում ես քեզ, շպարում դէմքդ և նստում ես դահլիճում՝ քո աթոռին՝ ինչպէս մի մանրքէն։ Անյոյզ դէմքով ականատես ես մնում վաւաշանքի անսանձ խաղերին, անսարսուռ ընդունում ես դէմքիդ վրայ գինու ոգով գաղջացած շնչերի ուժգին յորդումը և թաց, անասնութեան իջած շրթունքների համբոյրը։ Դու բռնի և սովորութեան ժպիտով գնում ես սենեակը և քեզ յանձնում ես ամեն մէկին՝ այնքան անխռով ու կրաւորական...

—Բայց ես հասկանում եմ հերոսութիւնդ և հիանում եմ նրան։ Հպարտացիր դու նրանով և նայիր ինձ զգաստ աչքերով. տես, ինչպէս խանդաղատանքով եմ փարուել ես քեզ, ինչպէս անսահման մարդկայնօրէն եմ սիրում ես քեզ. տես, ինչպէս փափագում եմ քո սիրոյդ և ինչպէս ուզում եմ առասպելական յարալէզների նման շնչովս կենդանացնել քո կամքը և յառ-

նել կրծքիդ տակ՝ փլատակների կոյտերում նիրհող քո մարդկայնութիւնը...

Զգա՛ դու իմ մարմնիս հպումը, թող քեզանում ծնուեն սիրոյ սարսուռները, մկանների խաղ առնեն ու ոտինքներիդ թառամութիւնը թարմութեան փոխի։ Շքեղօրէն ու կրքով ծիծաղիր դու ինձ և քեզ տո՛ւր ինձ քո կամքով...

— Ես կը սիրեմ քեզ ամբողջ աշխարհի առաջ, քեզ հետ կանցնեմ բազմամարդ ու պճնուած զբօսարաններով, կը մտնեմ ճոխ խնջոյքները, զոռ հանդէսները և լռախոհ տաճարները... Առնում եմ ինձ վրայ անարդանքներդ ու ամօթդ, եկ անցնենք շուկայի բազմութեան միջով, և թող նա մեր գլխին թափէ իր հայհոյանքի և վաւաշանքի հաճոյքները . . .

. . . . . .

Նա լսում է ինձ խաղաղութեամբ ու զարմանքով. ես բոլոր ուժով փարւում եմ նրան, փաթաթում կոնքերս մէջ և առասպելական յարալէզների նման ճգնում եմ շնչովս կենդանացնել նրա կրծքի տակ կարծես հէնց նոր ծանր քուն մտած մի թանկագին էակ...

Բարձրանում է կրծքիս տակ կարեկցութիւնը յորդ վտակի պէս և կը զարթեցնեմ ես նրան, կը հանեմ վեր փլատակներից...

1911 նոյեմբ.

ՓԱԽՈՒՍՏ

Փոքրիկ քաղաքի մերձակայ ամառանոցներից մէկում էի մի քանի օրով։

Մենակ էի մի ամայի խրճիթում։

Անտառների մենութեան ու խոհերիս հաճոյքից դուրս՝ ունէի ես այնտեղ նաև մի այլ հաճոյք. դա մի երիտասարդ այրիի տաքուկ յարկն էր, ուր մի մտերմական ջերմութիւն շրջապատում էր ինձ ամեն անգամ, երբ մտնում էի այնտեղ։ Կոկիկ ու մաքուր սեղան զով պատշգամբում, երեկոներին առատ լոյս, չորս-հինգ երեխաներ իրենց աշխոյժ խաղերով ու կանչով և միշտ ժպտադէմ, առատաձեռն ու վարսագեղ տանտիկին։

Եւ ամեն անգամ ես դուրս էի գալիս այնտեղից՝ տանելով հետս ափսոսանքի ու նախանձի մի զգացում։

Մի քմահաճոյք սակայն բուն էր դրել ինձանում, որի համար որևէ ակներև պատճառ ու բացատրութիւն չունէի։

Ես սիրում էի երիտասարդ տանտիրուհուն տեսնել տանը միշտ իր նուրբ ճապոնական մանտոյի մէջ՝ լայն թևքերով, հոլանի պարանոցով, կիսաբաց կրծքով ու փոքրիկ շլեյֆով։ Սրան պէտք է աւելացնել նաև հարուստ հիւսքերի անխնամ կուտակումն իր թիկունքի և ուսերի վրայ։ Ամեն անգամ, երբ նրան ես տանը տեսնում էի մի այլ զգեստում, մանաւանդ կօրսէյով, կոկիկ հագնուած ու կոկիկ սանրուած, կարծես մի բան ինչ-որ պակաս էր լինում այնտեղ և ես մի տեսակ սրտնեղութիւն էի զգում իմ մէջ։

Այս բոլորն սկզբում, անկասկած, անմեղ ցանկութիւն էր միայն, որը չկարողացայ հասկանալ՝ ինչպէս կամաց-կամաց դարձաւ ինձ համար պահանջ։ Ես հետզհետէ աւելի յաճախ էի պահանջ զգում՝ տեսնել երիտասարդ այրիին իր մանտոյի մէջ՝ վարսերն անխնամ թողած ուսերին։

Անտառների մենութեան մէջ իմ խոհերս արդէն սկսել էին դառնալ նրա շուրջը. երբեմն խոտերի վրայ պառկած ատենս տեսնում էի նրան քայլելիս՝ իր մանտոյի շղէյգն ետևից. իրանի ու կոնքի գեղեցկութիւնը յստակօրէն ծիծաղում էր իմ աչքերիս և այդ վայրկեաններին մեղքը թափանցում էր թևերիս մէջ. ես ցանկութիւն էի զգում փաթաթուել նրա իրանին և աչքերովս փնտռել իր աչքերում խուսափելու, փախչելու իր ճիգերը կաշկանդած...

Եւ վերջին օրերին արդէն անտառների խորութիւնն աւելի քիչ էի տեսնում ու խոհերս խռովել էին ինձանից։ Հազիւ ծառերի մի քանի շարքեր անցած, ես կրկին յայտնւում էի անտառից դուրս և ոտներս, առանց ինձ հարցնելու, բռնում էին երիտասարդ այրիի տան ճանապարհը։ Եւ տեսնում էի նրան միշտ իր մանտոյի մէջ, ժպիտն երեսին, առատութիւնը ձեռներին... Եւ հակառակ իմ սովորութեան, այդ օրերին աւելի քիչ զբաղւում էի երեխաներով, իսկ աւելի շատ՝ իրենով...

Դա արդէն դինովութեան ու խռովքի նշան էր...

Մի օր էլ դարձեալ մոռացութեանս մէջ քայլերս անտառից տանում էին ինձ դէպի այրիի բնակարանը։ Ճանապարհին անտառից միայն մի բան կար յիշողութեանս մէջ, որ ծառերն այդ օրն անսովոր եբերւում ու աղմկում էին. ուրեմն քամի կար, որ ես

չէի զգում, կամ աւելի ճիշտ, ուշադրութեան չէի առնում։

Երբ բարձրանում էի փոքրիկ դարիվերը, ես մտածում էի՝ ահա կը տեսնեմ տանտիրուհուն՝ իր հասակի ու կազմուածքի նրբութեամբ ձևաւորուած բարակ մանտոյի մէջ, վարսերն անփոյթ թափուած մերկ պարանոցին և փոքրիկ շէյգը խշշալիս իր քայլերի ետքից...

Այդպէս էլ տեսայ. միայն նրա ուսերն ու թևերը կիսովին պարուրում էր լայն ու տաքուկ բրդեայ շալը։ Եւ տեսայ նրան ոչ պատշգամբում ամենօրեայ պէս, այլ սենեակում. ճաշասեղանը փոխադրուած էր այնտեղ։ Տիկնոջ շալն ու այդ անսպասելի փոփոխութիւնը տարօրինակ թւացին և փոքր ինչ շփոթեցին ինձ։

Երբ սեղմում էի նրա ձեռքը, ասաց նա իր սովորական ժպիտով.

—Տեսնում էք, քամին քշել է մեզ այստեղ։

—Այո, կարծես թէ քամի կայ... Անտառում ծառերն ինչ-որ շարժւում էին...

Նա բարձր, անբռնի ու ամբողջ ախորժակով ծիծաղեց՝ կանգնած իմ առաջ. ես սակայն անմիջապէս հասկանալ չկարողացայ նրա ծիծաղը։

—Հարբած էք... Ինչպէս թէ ծառերն ինչ-որ շարժւում էին... Չէք տեսնում՝ ինչպիսի սաստիկ քամի է, ասաց նա ծիծաղով, մեկնելով ձեռքը փակ պատուհանով դէպի բակի ծառերը։

Ես նախ տնդղեցի նրա մեկնած բազուկը, որն այդ րոպէին բացւեց՝ մանտոյի լայն թևքի յետ ընկնելով, և ապա նայեցի դէպի գաւիթը։ Ծառերը յիրաւի կոծում էին իրար գագաթ և խլացուցիչ աղմուկ էր դրսում։

—Իսկապէս քամի կայ... Տարօրինակ բան, չէի զգացել...

Ու նա նորից ծիծաղեց բարձր, շուռ եկաւ ձեռները շփելով, ու դիմեց դէպի հարևան սենեակը...

Ես նայեցի նրա շէյֆին, ապա դիտեցի իրանն ու վարսերը, մինչև նա ծածկւեց։ Շուռ եկայ ու մօտեցայ պատուհանին. ականջումս էին դեռ նրա շարունակւող ծիծաղի վերջին հնչիւնները, որ մարեցին հարևան սենեակում... Ծառերը կոծում էին իրար գագաթ և քամին վայում էր... Որպէսի ծաղը,—մտմտում էի ես,—ծառերը կոծում են իրենց սեփական ճղները, ցաւն զգում և չեն հասկանում որտեղից է գալիս այդ քամին, որ խենթ է և օրէնք, իրաւունք չի հարցնում...

Եա եկայ և մի ըոպէ դիտեցի պատին կախւած պատկերը. գեղջուկ երիտասարդն աղբիւրի եզրին համբուրում էր մի աղջկայ՝ գրկած նրան թիկունքից, և յաւերժահարսն առատում էր երջանկութիւնն իր գոյլից... Երջանկութիւն աղջկայ համբոյրի մէջ... Իրաւ է...

Նստեցի ու թիկն տի աթոռին՝ արմունկս յեցած սեղանին, իսկ գլուխս՝ ափիս։

Հայեացքս անքթիթ՝ անորոշօրէն փուած էր պատուհանից դուրս։

Լսեցի յետևից տիկնոջ մանտօյի շրշիւնը, ու նա բոլորովին հանդիստ՝ նստեց իմ դէմ ու դէմ, ասելով.

—Խօսեցէք... գիտէք, որ ես միշտ հաճոյքով եմ լսում ձեզ...

—Այո... ասացի, առանց հայեացքս իրեն դարձնելու... Ես միշտ լաւ եմ խօսում... Անտառից այսօր միայն մի յիշողութիւն կայ մէջս, որ ծառերն անսովոր շարժւում էին... Իմ մոռացութիւնս էլ անսովոր կերպով յափշտակել է ինձ այսօր, որովհետև չեմ զգացել փոթորիկը... Արդեօք ի՞նչ է նշանակում

սա—չզգալ փոթորիկը, հարցրի հայեացքս անձկօրէն դարձնելով տիկնոջը, որ ժպտում էր մտախոհ ու վիզը թեքած զմայլանքի մէջ... Նա լուռ էր. ես նայում էի նրա աչքերին. նա խոնարհեցրեց հայեացքն ի վերջոյ, ասելով մեղմօրէն...

—Փոթորիկն զգում ու տեսնում է նա, ով փոթորկից դուրս է. . Դու փոթորիկը չես զգայ, որովհետև բանաստեղծ ես և ինքդ հանապազ փոթորկի մէջ...

Եւ ապա յարեց մի վայրկեանի լռութիւնից յետոյ.

—Շատ զգայուն են հոգուդ տերևներն իրենց արմատի վրայ. թեթև հոփ անգամ բաւական է նրանց ալեկոծելու և աղմկելու...

Այս խօսքերի վրայ մաքիս մէջ զարթնեցին նրա մանտօյի, մերկ պարանոցի, վարսերի ու շէյֆի հրապոյրը, ապա նրանց ետևից իմ յափշտակութիւնս և հուսկ՝ անտառների մենութեան ու իմ խոհերիս խռոված դէմքերը... Յիրաւի, յիրաւի՝ թեթև հոփ անգամ բաւական է ալեկոծելու, խորհեցի իմ մէջ և ապա փոքր ինչ յանկարծօրէն.

—Դուք ո՞րտեղից գիտէք այդ, ասացի ու պոկ գալով աթոռի յենակից, թեերս փռեցի սեղանին՝ կիսաբաց դնելով ափերս տիկնոջ առաջ...

Նա անանկատելիօրէն մերձեցրեց ձեռներիս իր ձախը՝ ասելով.

—Ես գիտեմ... տեսնում եմ...

Մեղմօրէն առայնրա ձեռն իմիններիս մէջ, հպում էի ու զգում նրա հաճոյքը... Սակայն արգելեց նա ինձ գինովցալ իրենով, որովհետև խոնարհեց իր հայեացքն իմ հայեացքիս առաջ և ես միայն նրա ձեռքի մէջ էի զգում իր անձնատուրը...

—Դու տեսնում ես, այո... Երբ ես այստեղ գալու կը լինեմ, հագիր միշտ քո ճապոնական մանտօն, հիւ-

սերդ անխնամ փոքր ուսերիդ, քայլիր միշտ այնպէս դեղաճեմ, որ շէյֆդ երերայ եռևիցդ ու շրշէ, և ես տեսնեմ իրանիդ գեղեցկութիւնը...

Ասացի, բայց այս անգամ ես էի ստիպուած խոնարհել հայեացքս նրա հայեացքի առաջ, որի մէջ կար մի քիչ ներող յանդիմանութիւն...

—Հոգուդ տերևներն ալեկոծուում են... ճիշտ էի ասում ես...

—Այո, ճիշտ էիր ասում... Ու սեղմեցի նրա ձեռքը, քաշեցի մի քիչ ինձ...

Նա խլեց ձեռքն ու անտեղի ուղղեց հեշտաեռի պղնձեայ տակը... Ներս էին բերում ինքնաեռը...

Գոլորշին թանձրօրէն բարձրանում էր սենեակում։ Տիկինը վերցրեց լուցկին, բարձրացաւ իր տեղում և վառում էր սեղանի վրայ կախուած լամպը... Ես տեսայ կրկին նրա թևերի մերկութիւնը և սակայն չհամարձակուեցի լամպի պայծառ լոյսի մէջ նայել իր աչքերին...

Սկսեց դանդաղօրէն զբաղուել թէյով. հանեց բուֆէից բաժակներն ու շարեց սեղանի վրայ։ Երբ տեսայ երեխաների փոքրիկ գաւաթները, միայն այդ ժամանակ լսեցի նրանց ձայները հարևան սենեակում, ուր նրանք, ըստ երևոյթին, տարուած էին ինչ-որ խաղով։

—Խօսիր,—ասաւ տիկինը, շարունակելով իր գործը,—դու միշտ լաւ ես խօսում և ես միշտ հաճոյքով եմ լսում քեզ...

Ես խօսելու փոխարէն որոնեցի նրա հայեացքը, որը սակայն նա ցոյց չտուեց ինձ։

—Երևում է, դու առանձնապէս չես հոգում ինձ հաճելի լինել,—յարեց նա նոյն տոնով և նոյն կերպ։

Ես նայում էի նրան լուռ և ականջ դնում երեխաների ձայնին, որը հետզհետէ բարձրանում էր։ Այդ

ժամանակ յանկարծ, չիմացայ ինչպէս, ներսումս մի խայթող տհաճութիւն զգացի... Իմ առջևս պատկերացան կարծես երեխաների մանկական դէմքերը, և ես ամաչում էի իմ քիչ առաջուայ զգացմունքներիս համար դէպի նրանց մայրը... Ցիմար, երերուն տերևներ, որ ալեկոծուում էք թեթև հողմից իսկ...

Վայրկենական մի շփոթութիւն ծաւալուեց իմ մէջ...

Ու ես զգում էի, որ տհաճութիւնն աճում է ներսումս և միաժամանակ կարծես շնորհակալ էի լինում տիկնոջը, որ նա խոնարհեցնում էր իր հայեացքն իմ աչքերիս, իմ, ով գիտէ, մեղաւոր աչքերիս առաջ...

—Այսօր ես ձեզ կըտամ հիանալի մեղր ու կարագ,—ասաւ տիկինը, նայելով ինձ լայն հայեացքով,—բաւական է հաճն առնէք և կը ցանկաք միշտ ճաշակել նրանից։

—Գիտեմ. ձեր առատաձեռնութիւնն ու նուրբ ճաշակը դուք իսկի չէք խնայել ինձ համար,—ասացի ես՝ արդէն մի քիչ յուսահատ շեշտով։

—Դու անկասկած հեգնում ես ինձ...

—Ոչ... Ես շնորհակալ եմ քեզանից...

—Անկեղծօրէ՞ն...

—Այո...

—Դէ որ էդպէս է, համբուրիր ինձ... կամաց...

Ու իր այտը, հապճեպ մի շարժումով, պատրաստակամ մեկնուած էր շրթունքներիս առաջ... Ես համբուրեցի նրան և գլուխն ընդոստ սեղմեցի կրծքիս վրայ, հաստատ գիտնալով, որ դա այլևս չի լինելու։

Նա արագ պտտուեց սեղանի շուրջը, և մեղրը ու կարագը, թէյերը լցուած պատրաստ էին։ Ձայն տուեց երեխաներին, որ գան թէյ խմեն ու ինքն էլ նստեց։

—Հը՞, համով է՞ մեղրն ու կարագը, հարցրեց նա ժպտալով։

—Այո, համով է, բայց ես ո՞ւրտեղ գտնեմ այդ-

պէս սրտանց մատուցած մեղր ու կարագ։

—Դեռ այսօր մի մտածիր այդ մասին։

Նա երկրորդ անգամ կանչել էր երեխաներին և նրանք դեռ չէին եկել։ Լռութիւն էր։

—Խոսիր, ասաց նա իր սովորական ձայնով։

—Ի՜նչ լաւ է, որ գինովութեանը յաջորդում է զգաստութիւնը և զգաստութիւնն էլ իր հերթին մշտատև չէ... Եւ ի՜նչ լաւ է, որ միենոյն հաճոյքը և՛ յափշտակում, և՛ վանում է...

—Բայց դու զեղեցիկ ես, երբ գինով ես... խեղճ... Ուզում ես սանձել հոգուդ դիւրաշարժ տենչները... Ախտոն...

Ու իր հայեացքը շեշտակի ինձ վրայ էր, և այս անգամ ես էի, որ խոնարհեցնում էի հայեացքս, որ պարտւում էի։ Սակայն ես պարտւում էի, որովհետև ուժերս արդէն նահանջի մէջ էի դրել...

Այդ միջոցին աղմուկով ու կանչերով ներս թափուեցին երեխաները բոլորը մէկէն։ Նրանք վիճում էին ինչ-որ բանի համար և չորս կողմից աղմկելով դիմեցին իրենց մօրը, որպէս դատաւորի։ Նրանցից մէկը, մի գանգրահեր տղայ, մի իսկական ամուր, մեղաւոր էր և մայրը սաստեց նրան։ Նա վիրաւորուած, իր կատաղութեան մէջ կպաւ պատին և դառնագին լալիս էր։

Միւսներն ուրախ քրքջալով շարուեցին սեղանի չորս կողմը՝ ամեն մէկն իր դատաթի դիմաց և կեանքը զարթեցաւ ու վերթեց այնտեղ... Գեղեցիկ էին բոլորը, ինչ որ նրանք անում էին, ինչ որ նրանք պատմում էին իրենց խաղերից, իրենց կռիւներից։ Եւ իմ բաժին զգւանքներս էլ նրանք բոլորը տուին ինձ... Ա՜խ, նրանք միշտ քաղաքավարի են ու հոգատար և ոչ ոքի չեն զրկում...

Ու տեսնում էի երիտասարդ այրին իր աթոռի

վրայ մի թագուհի՝ շրջապատուած անձնուէր ու գեղեցիկ սիրով։ Ո՛ր կողմը դարձնում էր նա իր հայեացքը, փայլ ու դորով էր ըմպում և ամենքին փոխադարձ բաշխում էր սէր և մտերմութիւն։ Ամեն մի բարձրագոչ ծիծաղից ու խնդութիւնից յետոյ նա անհամար զգւանքներ էր ընդունում և անհամար զգւանքներ բաշխում...

—Ի՜նչ յանդգնութիւն,—խորհում էի ես շիկնելով ամօթիս մէջ,—մտնել այս սիրոյ թագաւորութիւնն այնպէս աղքատ ու խղճալի, ինչպէս ես՝ հոգուս դիւրաշարժ տենչներով... Փառք զգաստութեանը, որ զարթնեց մէջս ճիշտ ժամանակին... Եւ այնպէս հէգ էի ես իմ աչքում զգացմունքներովս ու սիրովս...

Այդ միջոցին լացող գանգրահեր ամուրը պոկ եկաւ պատից, արագութեամբ բարձրացաւ մօր գիրկը, թևերով պիրկ գրկեց նրա պարանոցը և անհամար ամուր, ամուր համբոյրներով ծածկել սկսեց մօր դէմքը...

Երեխաները բարձրագոչ ծիծաղում էին, ես ապշած դիտում էի։ Ամուրը, երբ մօր դէմքը բոլոր տեղերից անթիւ անգամներ համբուրել էր, երբ նրա շրթունքները շատ, անյագօրէն, շատ ծծել էր, թևերը բացեց, փաթեց մօր կրծքին, շրթունքները սեղմեց այնտեղ և սեղմում, սեղմում էր բոլոր ուժով այնպէս, ինչպէս կարող էր սեղմել մի օձ իր ճապուկ մարմնով... Մայրն անդորրութեամբ ծնօտը յենել էր ամուրի գանգրահեր գլխին։ Նա հայեացքը դարձրեց ինձ.

—Խոսիր, բանաստեղծ, դու լաւ ես խօսում, ես միշտ հաճութեամբ եմ լսում քեզ...

—Այո՛,—ասացի կանգնելով տեղիս,—ես միշտ լաւ եմ խօսում... Անտառից այսօր միայն մի յիշողութիւն կայ մէջս. ծառերն անսովոր կերպով շարժւում

էին... Իսկ գիտէ՞ք, դա ինչ է նշանակում. այն, որ ճղների վրայ բոլոր վատուժ ու դեղնած տերևները վար պիտի թափեն և պիտի մնան այնտեղ միայն կանաչ ու իրենց ոստերի վրայ ամուր կպած տերևները, որոնք կարող են դիմադրաւել բոլոր քամիներին...

—Այլաբանօրէն ես խօսում,—ասաւ տիկինը նենգ ժպտով,—այդ հաշւով ուրեմն փոթորիկները սոսկ ուժեղացնում են... Իսկ քոնը՞, քո փոթորի՞կը... Արդեօք շատ վատուժ ու դեղնած տերևները ընկան հոգուդ մէջ... Ցեռ, չուժեղանաս այնքան, որ ինձ բոլորովին մոռանաս...

—Դու մի երջանիկ թագուհի ես, ունես պալատ ու թագաւորութիւնդ. իսկ ես մի թափառական, անտուն դէրվիշ եմ։ Դու հիւրընկալեցիր ինձ քո տաքուկ յարկի տակ և սէր ու առատութիւն ցոյց տուիր. այժմ ես նորից պիտի գնամ դրսերը, պիտի գնամ հողմերի մէջ, պիտի մնամ մենակ՝ ամայի խրճիթների մէջ... Պիտի գնամ, որպէսզի ուժեղանամ ու մաքրեմ ինձ... Ես քեզ չեմ մոռանայ այնքան, որ քո երջանկութիւնդ ու թագաւորութիւնդ կերգեմ իմ երգերի մէջ...

—Բայց լաւ երգիր...

—Այո, վստահ եղիր... մնաք բարեաւ...

Ու փնտռում էի ես գլխարկս ու բարակ վերարկուս, որ տուին ինձ...

—Սակայն քամի է դուրսը, ցուրտ քամի...

—Շատ խիստ քամի է դուրսը, ցուրտ է,—կանչեցին երեխաները չորս կողմից,—մնացէք, մնացէք մեզ մօտ գիշերը, ցուրտ է դուրսը։

—Շատ ցուրտ չէ, ես կարող եմ գնալ, պատասխանեցի երեխաներին և ապա դառնալով նրանց մօրը.

—Թող լինի ցուրտ քամին, նա ինձ համար է.

նա փչում է, որպէսզի ես դուրս գնամ... կրկին մնաք բարով...

Ու դուրս եկայ. նրանք բոլորն էլ դուրս եկան ինձ հետ պատշգամբը սարսռալով՝ աւելի ցրտից վախելու սովորութիւնից, քան ցրտից։ Ես վար իջայ ու արագ անհետացայ...

Երկինքը մթագնած էր. գնում էի թանձր խաւարի միջով, առանց ոչինչ տեսնելու. քամին ոռնում էր ու ես դողում էի՝ կծկւած բարակ վերարկուիս մէջ...

Գնում էի ես՝ անպատսպար աշխարհի հողմերի առաջ, և ոչ մի տաքուկ յարկ չէր սպասում ինձ ոչ մի տեղ, ոչ մի գիրկ չկար որևէ տեղ՝ ջերմացնելու ինձ և ոչ մի ձեռք չկար, որ շոյէր ինձ...

Ա՜խ, անտառների մենութիւնն ու խոհերս են լինելու դարձեալ իմ ընկերներս, որոնց ոչ ոք չի կապտի ինձանից...

Ու փախչում եմ, փախչում եմ նրանց մօտ...

1911 յունվ.

ՁԱՏԿԱԿԱՆ ԳԱՌԸ

Արևն ինչպէսի քնքշութեամբ իր ջերմութիւնն է հեղում նոր բացուող բողբոջների մէջ, դայեակն զմայլանքով առաջնորդում է փոքրիկ աղջկան, և սպիտակ հագուստը որպիսի պայծառ ժպիտով գգւում է նրա նուրբ ու դալար մարմինը...

Ա՜խ, ամբողջ աշխարհը լիքն է սիրով ու գըգւանքով... Միայն իմ սրտի վրայ ծանրացած է մեղանչումի դառնութիւնը...

Երէկ՝ Յարութեան ճրագալոյցի արևը ջերմ աչքերով նայում էր երկրի վրայ, փողոցներով ուրախութիւն էր հոսում...

Անկամ քայլերով, ձեռներս պահած գրպաններիս մէջ և աչքերս անթարթ ցած թողած՝ ես գնում էի իմ պարոնի ետևից՝ լայն, ուրախ փողոցներով...

Որպիսի տանջող հրապոյր ունէր աշխարհի ազատութիւնն ու գեղեցկութիւնը... Այս շքեղ տօնը՝ գարնան պայծառ արևին՝ թովում, կանչում էր ինձ դէպի լեռների կատարներն ու կանաչ մարգագետինները՝ զուարթ ընկերներով, նոր փայլուն զգեստներով և հրճւանքի ու ցնծութեան երգերով... Բայց իմ սըրտում արցունքներն էին հոսում, բայց իմ սրտում քէնն ու կատաղութիւնն էին աճում Յարութեան ճրագալոյցին...

Որովհետև միտքս սուառնում էր ու քայլերս կաշկանդւած էին...

—

Զատկական շուկան եռում էր գլխակորոյս՝ հազար ձիչերով, հազար կանչերով լի... Մատաղ դառները մեծ խմբերով մակաղւած են խոնաւ պատերի տակ և երկար, դալար ճիպոտները կաշկանդում են նրանց քայլերի ազատութիւնը... Ողորմուկ մայիսները բարձրանում են ապուշ, անհոբիզոն աչքերի միջով, և կանաչ մարգագետիններից՝ ցեխոտ ճամբաներով, փոշոտ փողոցներով՝ այս օտարոտի մակաղատեղին քշելու անհասկանալի սարսափը փուած է նրանց գլխներին... Գառնական սրտերը լալիս են հեռաւոր, անմատչելի կարօտները...

Եւ անաւաղ, շարժուն վանդակների մէջ գիրուկ խոճկորներն են, որ անձուկ, անօրինակ տագնապի մէջ կճղակներով տրորում են իրար կողերն ու գլուխը, խռնչում են, խորդում են և ճաղերի արանքով թաթանցող սուր աչքերից իրենց կնճիթներն ու գլուխները ճգնում են թաղել ամենի սարսափահար կուտակումների տակ... Լայն ու պարարտ ճահիճն ինչպէս յանկարծ փոխւեց այս նեղ ու չոր պատերին... Իրենց զարհուրանքի ճիչերով նրանք ճանաչում, հասկանում են չորս կողմում վխտացող այս բազմութիւնը, և երբ բռնում են նրանց որևէ ոտքից ու դուրս քաշում անխնայ, դրա համար է, որ ոգորում են մտնուկի իրենց բոլոր ուժով, ճչում, ճղաւում են ամբողջ կոկորդով և շուկան լցնում մահւան սոսկումի աղաղակներով...

Զատկական շուկան է, որ խլացնում է ինձ, տատանում ու քայլերս կասեցնում, ինչպէս տարօրինակ կերպով այստեղ տէրը չէ մարդ իր քայլերի... Նեղ է, մի օղակ պարանի... Բայց աչքերս հանգչում են գառների հօտին հնազանդ, ինչքան կոպիտ ձեռներ շօշափել, սեղմել են նրանց մատաղ գաւակները և ամեն

մէկը նրանցից, ով կարող է ասել, քանի անգամ կոկորդից, փորից ճանկված՝ հանուել է վեր օդի մէջ, կշռուել իր միսերով ու կրկին ցած ընկել... Հնազանդ են նրանք ամենքին և ունին միայն խոնարհ մի մայիւն... Գառն Աստուծոյ...

Գառնուկը, որ ընտրեց իմ պարոնը, կանգնած էր սրունքներիս մօտ սեղմ և իր հպումներով ու քաշ արուած գլխով մեզ էր յանձնում այսուհետև իր վիճակը... Ինչպէս նրանք սիրելիօրէն լաւ են զգում իրենց վիճակի փոփոխութիւնները...

Գառնուկը դրին վզիս վրայ. ես պիտի բռնէի ձեռներիս մէջ նրա առջևի և ետևի ոտները զոյգ-զոյգ...

Ի՜նչ է մի գառնուկի ծանրութիւնը, բարի ու խոնարհ գառնուկի: Բայց նրա բեռն իմ պարանոցին գաղազում էր ինձ: Այդպէս է միշտ. միայն իր նմանի և բախտակցի բեռն է ատելի ու անտանելի, հազար տարիների մէջ միայն մի անգամ պատահող այդ թեթև ու ցամաք բեռը: Բայց դրա փոխարէն հանդուրժելի է բռնաւորի բեռը՝ ամեն օր, ամեն տարի և հազար տարի...

Այդպէս և ես՝ խոնարհ, անխօս՝ բայց որ գաղազում էի մատաղ ու խղճուկ գառնուկի դէմ...

Քայլում եմ ճանապարհս դէպի տուն: Քէնը կատաղութիւն է տալիս մատներիս, և ես ատելութեամբ սեղմում եմ ձեռներիս մէջ գառնուկի ոտները: Նա ցնցւում, ձգձգւում է ցաւից. իմ ատելութիւնն աճում է, և սեղմում եմ չարութեանս մէջ նրա ոտներն ամուր, ամուր և աւելի ամուր... Յուսահատ գառնուկն ի վերջոյ ընկճւում է ցաւերի տակ, խղճալիօրէն կախում է ուսիս վրայ թուլացած գլուխը և ոտներն այլևս անշարժ թողնում է կատաղած մատներիս մէջ:

Ամբողջ ճանապարհին զգում էի ծոծրակիս վրայ գառնուկի հեռմները, լսում էի կախ ընկած ռունգներից ցաւի իր փոքրիկ ֆնչումները, իսկ մատներիս տակ էին ճարճատող մանրիկ ոսկորները... Եւ խղճահարութիւնը տակաւին չէր զարթնում իմ մէջ...

Փողոցներն էլի լիքն ուրախութիւն էր, արևը ջերմ ու պայծառ և հեռուները՝ սարերի կատարներն ու կանաչ մարգագետիններն՝ հրապուրիչ... Էլի տանջում էր ինձ աշխարհի ազատութիւնն ու գեղեցկութիւնը...

Բարձրացայ սանդուխքներով և գառնուկն իջեցրի ցած պատշգամբի վրայ: Բայց նա կանգնել այլևս չէր կարող. ոտները փայտ էին կտրել և անշարժ: Եւ ողորմելին պառկել էր պատշգամբում ամբողջ մարմնով՝ ոտները փռած, գլուխը խղճալիօրէն մեկնած: Հազիւ երևում էր կլսախուփ աչքերի փայլը, հազիւ շարժւում էին բարակ ռունգները... Գառնուկն ընկած էր ամբողջ մարմնով անշարժ՝ իմ աչքի առաջ, և ցաւը սուր ասեղի պէս վայրկենական խոցեց սիրտս ու աչքերումս յայտնուեցին զղջումի արցունքներ...

Ինչպէ՞ս նա դարձեալ հնազանդ էր ու անբողոք. ինչպէ՞ս դարձեալ ոխ ու ատելութիւն չկար իր տանջուած աչքերում... Յաւիտեան սիրելի, յաւիտեան գովելի դու Գառն Աստուծոյ...

Եկաւ բարձրահասակ, փարթամ տանտիկինը, ուրախ կանչերով թափուեցին երեխաները, բայց բոլորն էլ յանկարծ սառած մնացին.—Ինչո՞ւ է պառկած գառնուկը, ինչո՞ւ կանգնել չի կարողանում: Ու այժմ էլ երեխաների ցաւը, վիշտն է անտանելին և բարեսիրտ տիկնոջ ապշանքը:

— Ա՛յ տղայ, սա հէնց էսպէս է՞ր:

— Ո՛չ:

— Բա ինչո՞ւ չի կանգնում:

Լուռ եմ։

—Խեղճ գառնուկ, ոտներն է, շարժել չի կարողանում։ Ա՛յ տղայ, կարելի է դու ես արել։

Լուռ եմ։

—Հա՞. այ տղայ, կարելի է հուպ ես տուել ոտները. ուսիդ վրայ բերեցիր. և էդ օրին գցեցիր խեղճին։

Լուռ եմ։

—Անխիղճ, խեղճ, անլեզու անասունն ինչով էր մեղաւոր... Վայ, խեղճ, անմեղ գառնուկ...

—Անխիղճ։

—Անպիտան։

—Անգութ։

Թափեցին վրաս երեխաներն իրենց նախատինքն աչքերի ատելութեան հետ, և ես գլուխս խոնարհ կանգնել էի նախատինքների տակ։

Այդպէս, այդպէս. դա թեթևացնում է ինձ, սփոփում է վշտացած սիրտս...

—Վայ, անմեղ գառնուկ։

—Անուշիկ գառնուկ։

—Սիրելիս։

—Փնքուշիկս։

Գուրգուրում էին այդպէս երեխաները, և իմ աչքերից գաղտնի սրբում էի ես հանգստացնող արցունքները։

Բարձրացրին, գրկեցին մի քանի կողմից գառնուկին և մայրերի հսկողութեամբ տարան սեղանատուն։

Ամեն բան արին նրա համար. փաթաթեցին, տաքացրին ու շոյեցին։ Մի քիչ ժամանակից յետոյ գառնուկը ոտքի կանգնեց և երերալով գցում էր ոտներն առաջ։

Երեխաները մեծ հրճուանքի մէջ զարդարեցին

նրան, տանում էին սենեակից սենեակ. հանեցին պատշգամբը, երգում էին նրա համար, գուրգուրում ու կանչում էին...

Դա զատկական գառն էր...

—

Իսկ ես խոհանոցումն էի. աշխատում և դիտում էի ամենքի աշխատանքը... Այսօր ինչքան ուելի էին աշխատողները, լիքը պատրաստութիւն, տաք ու դուրեկան գոլորշիներ... Ամենքը հապճեպ դառնում են ամեն կողմ և ամենքի մերկ ձեռների ու թևերի վրայ ճենճերն է...

Ինչպէս սրանք ժամանակ չունեն գլուխ քորելու, Աստուած իմ։ Գառնուկի այն սրտաշարժ, խղճուկ վիճակը հազիւ միայն մի-երկու ակնարկ խլեց նրանցից և մի ցաւի հառաչանք։

—Մեղք է անլեզու անասունի հետ չար վարուելը,—ասում և առանց որևէ կողմ նայելու շարժւում, վազվզում էր մէկը։

—Մի հորթի քառասուն տարի առաջ վատ քացի եմ ուել և քառասուն տարի է, մոքիցս չի գնում, միշտ յիշում եմ և միշտ սիրտս ցաւում է,—ասում էր ծերունի խոհարարը դանդաղ՝ առանց աչքը կաթսայից հեռացնելու...

—Դժար է, դժար, անլեզու անասունի բանը...

Ինչպէս սրանք գլուխները չեն բարձրացնում ու չեն նայում իրենց շուրջը... Իսկ դրսում ջերմ աչքերով նայում է աշխարհին ճրագալոյցի արևը, աշխարհը գեղեցիկ է իր ազատութեան մէջ, և հեռուներից դարձեալ հրապուրում են սարերի կատարները, կանաչ մարգագետինները...

Վանդակների մէջ խցած խոճկորները, խոնաւ պատերի տակ մակաղած գառների երամը և իմ կաշ-

կանգուած քայլերը,—ինչպէս բոլորն էլ միևնոյն ուրցունքն են լալիս... Եւ նոյնպէս սրանք՝ հապճեպ աշխատող ու ճենճերոտ բաղուկներով. ինչպէս սրանք էլ մօտ են ու կարօտ աշխարհի ազատութեանը...

Շուտով կառքերի աղմուկով կը լցւեն փողոցները. զանգերը հազար տեղերից կը զօղանջեն հրճւանքի դողով. պատերի տակով ցնծութեան կանչերը կը հնչեն, բայց բոլոր խոճկորները և բոլոր գառնուկները մեռած կը լինեն իրենց սարսափի մէջ, իմ քայլերիս կապանքն անարձակ, և սրանք դարձեալ հապճեպ կը վազեն ճենճերոտ թևերով, աչքերը միշտ ներքև, առանց շուրջը նայելու, առանց դրսի ձայներին ականջ դնելու...

Ա՜խ, գերութիւնն է, ամենքի գերութիւնը...

Եւ կարճ գիշերը կարճ միջոցով ծածկում է աչքերս, ծածկում է ինձանից աշխարհի գեղեցկութիւնը՝ գառան տանջանքը և կաշկանդուած քայլերիս ամօթանքը...

—

Այսօր—Յարութեան մեծ տօնի օրը արևը նոյնպիսի ջերմ աչքերով է նայում երկրին, ինչպէս և երէկ, հրաշալոյցի օրը։

Այսօր էլ գառնուկը սիրուն է ու զարդարուն, ինչպէս և երէկ։ Ողջ կարմիր ու ծաղիկ՝ մեծ սկուտեղի մէջ դրուած է նա լայն սեղանի մէջտեղում և շուրջը ճերմակ, գոյներ ու բուրմունք...

Զատկական գառն է նա...

Խեղճ գառնուկ. դու դարձեալ գերութեանդ մէջն ես անշարժ, քո ազատութեան կարճ ժամերդ եղան երկու ամիսների խայտալդ՝ մայրական ստինքների տակ և երկու ժամերի զարդարանքդ՝ մանուկների գուրգուրանքի տակ...

Դու գնացիր, ինչպէս և պիտի գնան այս ծերունի

խոհարարը և բոլորը, որ ճենճերոտ թևերով հապճեպ վազվզում են նեղ խոհանոցում... Բայց նրանք իրենց ազատութեան կարճատև ժամերն ապրե՞լ են, կամ կապրե՞ն արդեօք...

Խեղճ գառնուկ, քո ցաւդ միայն մնաց, ոտներիդ մորմոքը, որ քառասուն տարի պիտի ապրի իմ սրտում և քառասուն ճրագալոյցների պիտի մխայ, պիտի մորմոքի իմ սիրտը... Խեղճ գառնուկ, անմեղ, անուշիկ գառնուկ. սիրելի ու քնքուշ գառնուկ...

1912 փետրվ.

ՄՈՒԹ ԱԼԻՔՆԵՐԻ ՎՐԱՅ

Այլևս խպառ յոգնել էի սենեակի մեն դալուց. մի ամբողջ շաբաթ էր՝ փնտռում էի, ուզածս սենեակը դեռ չէի գտել։

Շատ կային, ի հարկէ, իմ ճաշակին և յարմար սենեակներ, միայն նրանք ունեցածս փողին չէին յարմար։ Կարծում էք՝ ես մեն էի գալիս միայն հեռաւոր, աղքատ ու նեղ փողոցներում, կամ թագնուած, միշտ թաց ու խեղդող գազերով տոգորուած նրբափողոցներում. ոչ, սխալւում էք։ Քաղաքի կենտրոնում՝ լայն ու մաքուր փողոցների, պրօսպեկտների վրայ՝ շքեղ, լուսաւոր տներում, արիստոկրատ դահլիճներում նոյնիսկ ես մուտք էի գործում։ Որտեղ միայն ճերմակ թուղթ տեսնում, մտնում էի՝ առանց այլևայլի։ Եւ թէպէտ շքեղ դռների առաջ ինձ ոտքից գլուխ զարմացած ու հեգնանքով չափում էին՝ նախ աղախինը և ապա տիրուհին, բայց ի՞նչ փոյթ, ես մտնում հարցնում էի բոլոր պայմանները և ամենևին չէի շփոթւում այն հսկայական դռների առաջ, որոնք երբեմն իմ ամբողջ երեք ամսւայ ռոճիկն էին կազմում։

Մի տիկին իր սենեակի համար պահանջեց եօթանասուն բուբլի։ Ճաշ չկար հետը։ Ես չեմ հասկանում, ինչ մի բան կարող էր լինել այնտեղ, որ այդքան փող արժենար։ Սենեակն առանձնապէս շքեղ չէր. այնտեղ կային գրասեղան, աթոռներ, գզրոց, մահիճ—մահճակալ և ուրիշ ոչինչ. վերջինը միայն բաւական շքեղ էր ու հրապուրիչ։

—Ոչինչ չէ՞ք կարող զիջել, տիկին։

—Ո՛չ, դժբախտաբար չեմ կարող։

—Այդ դէպքում ես չեմ համաձայնւի այդքան փող վճարել սրան։

—Ձեր կամքն է, միայն թէ լաւ կը լինէր մի քիչ աւելի բարձր ճաշակով ապրել...

Մի քիչ աւելի և շատ աւելի բարձր ճաշակով ապրել, օ, ես կարող եմ և կուզենայի, բայց՝ ափսոս, սիրելի տիկին...

Յոյսս այլևս կտրած, ճամբիս վրայ՝ արիստոկրատ թաղում՝ յոգնած մտայ մի տուն էլ։ Կարծեմ օրից բաւական անց, կէսօրին մօտ կը լինէր։ Գեղեցիկ բակ էր՝ պարտէզով, ճեմելիքներով, ծաղիկներով, զրուցարանով։ Օ՜ֆ, ի՞նչ երջանկութիւն կը լինէր այստեղ ապրել. մերթ-մերթ յոգնած հայեացքը հանգստացնել այս թարմ ու վառ կանաչների վրայ և անցնել ճեմելիքներով՝ փափուկ ապրած փափկիկ աղջիկների հարևանութեամբ։

Ներքևի յարկումն էր արւելիք սենեակը. աւելի լաւ. սենեակից ուղղակի պարտէզ, պարտէզից սենեակ—առանց դժւարութեան։

Թխթխկացրի լուսամուտի ապակին. դուրս եկաւ վախտ ու բարձրահասակ մի դերմանուհի. այսպէս էր երևում վրայից։ Ջահել չէր։ Եւ հետաքրքիր էլ չէր՝ ջահել կը լինէր, թէ ահել. ծառայող էր։—Սենեակ։

Մտածեց և ներս գնաց։

Շատ շուտ հրաւիրեց ինձ ներս—ընդարձակ դահլիճում։ Նրա անկարգութիւնը ամառնային իր թափուր կեանքն էր մատնում, մի կողմում էլ, դռանն անմիջապէս մօտիկ՝ կանգնած էր մեծ շիրմա։ Ներս մտայ հէնց, այնտեղից հնչեց կանացի մի թաւ ձայն, որն օտարոտի էր, բայց չեմ կարող ասել ինչպիսի. երաժշտ-

տուֆեան մէջ կատարելապէս բոբիկ եմ։ Իսկոյն հասկացու

էր, ոչինչ չէի աւելացրել. մի և մշտական զարդարանք, որ ես ունէի, դա մազերս էին։

Տիկինն այսօր ընդունեց ինձ բոլորովին հագնուած պատրաստ։ Վիթխարի մի կին էր՝ մեծ, դուրս ընկած կրծքով, լայն կոնքի վրայ ամուր սեղմած հաստ մէջքով. գլուխը պահում էր բարձր, դէմքը լայն, այտերի վրայ կարծես հիւանդագին թանձր կարմիր և աչքերը մռայլից։ Հրէուհի կը լինէր անպատճառ։ Ռուսերէնը խօսում էր ճիշտ, բայց ոչ առանց ակցէնտի։ Եւ վերջապէս ուրիշ ոչինչ եթէ չլինէր, այդպիսի մի ֆենոմէն, թւում էր ինձ, միմիայն հրէուհին կարող է լինել։

—Երեկուայ պարոնն է՞ք, այո՞,—ընդառաջեց նա ինձ՝ վրայ տալով նորէն իր թաւ մաժոր-տոնով.—շատ ուրախ եմ, որ եկաք ճիշտ ժամանակին. համեցէք սենեակը տեսէք, անպատճառ կը հաւանէք։ Վրայ էր տալիս ու միևնոյն ժամանակ շտապ վազում դահլիճի միւս ծայրին գտնուող դռանը։ Դուռը փակ էր. ու կանչեց.—Լեօվա, վո՞ր կաց, շո՛ւտ, սենեակը մարդ է եկել տեսնելու. մի՛ տխրի, քեզ այն միւս սենեակը կը տամ, աւելի լաւ...

Դարձաւ դէպի ինձ՝ ամբողջ ժպիտ դարձած.

—Կը վերկենայ իսկոյն և դուք սենեակը կը տեսնէք. հայ է՞ք։

—Այո։

—Այդ ես իսկոյն իմացայ. հայերին առանձնապէս սիրում եմ. քաջ են։ Ականջը մօտեցրեց դռանը.—վեր կացա՞ր, շո՛ւտ... Լսացուում է, շուտով դուռը կը բացի, դուք միայն փոքր ինչ սպասեցէք, սիրելի պարոն։

Բայց դէմքի ժպիտն արագ տեղի տուեց մեծ հառնդի արտայայտութեան՝ աչքերի մէջ. լրջացաւ։

—Բայց դուցէ կընտրէք դուք ուրիշ սենեակ. եկէք ինձ հետ, խնդրեմ։

Եւ ինչպէս ձգած ուղին, մեծ ուժգնութեամբ նետուեց նա դէպի դահլիճի միջին դուռը. անցնում էր արագ՝ դատարկ ու թափուր բազմաթիւ սենեակներով՝ դռներն աղմուկով ու սաստկութեամբ իրար վրայ կոտրտելով, կարկուտի պէս արագ ինչ-որ ասում էր ամեն մի սենեակի համար և կրկնում էր միշտ.—հետևեցէք ինձ։

Ես ստիպուած էի ուղղակի վազ տալ նրա յետևից, որ չկորցնեմ աչքիցս. սառածներից ոչ-մէկին, ի հարկէ, չէի հասնում և չէի պատասխանում։

Վերջին շունչը նա առաւ նախասենեակում. մեծ աղմուկով ոլորեց մուտքի դռան բանալին, նոյնպիսի աղմկոտ թափով բացեց փեղկը կրնկի վրայ և դիմեց ինձ.

—Ահա, պարոն, ամեն լաւ մաքուր, հիանալի. աւելի ի՞նչ էք ուզում. լիքը սենեակներ, ապրեցէք, ինչպէս ուզում էք։ Ահա ձեզ նաև առանձին մուտք ու բանալի. եկէք-գնացէք՝ երբ ուզում էք, արէք՝ ինչ ցանկանում էք. ոչ մի մարդու կը նեղէք, ոչ էլ մի մարդ ձեզնից կը նեղանայ... —Լեօվա, շո՛ւտ, վեր կացա՞ր,—դիպաւ նա սենեակի այդ կողմի դռանը։

—Պատրաստ եմ, պատրաստ եմ, լուեց սենեակից դժգոհ։

—Եկէք ինձ հետ, ասաց ու շտապեց։

Ես դարձեալ ստիպուած էի սենեակների և դռների աղմուկի միջով վազել նրա յետևից։

Դահլիճի մէջ բացուեց սենեակի դուռը. ես տիկնոջ ետևից ներս մտայ.

—Ահա, պարոն, նայեցէք,—ասաց տիկինն անմիջապէս՝ բացելով հսկայական թևերը և ամբողջ սե-

նեակը՝ վերով, վարով, բոլոր պարագաներով մի շարժումով ցոյց տալով,—մաքուր է, լուսաւոր, բոլոր յարմարութիւններով, պատուհանը նայում է պարտէզ. հաւանեցէք, պարոն, հաւանեցէք, շատ լաւ կը լինի ձեզ համար այստեղ, շատ լաւ...

Ապշած էի մի բոպէ։ Աչքիս առաջն էր մահճակալը՝ դեռ չհաւաքած անկողնով, լայարան, մի ոչ այնքան մաքուր սեղան՝ նկարչական պարագաներով, փոքրիկ արձաններ, եռոտանի՝ վրան կտաւ. իսկ պատուհանի մօտ կանգնած էր պատանի Լեօվան՝ թարմ, նոր լացուած-սանրուած և նայում էր ինձ լուրջ աչքերով։

Սենեակն առանձնապէս տպաւորիչ չէր՝ մանաւանդ իր այս անկարգութեան մէջ. բայց այնուամենայնիւ փափագելի էր այս գեղեցիկ գաւթում ապրել, թէկուզ սենեակը լինէր անգոհացուցիչ, թէկուզ ես նրա համար վճարէի իմ ոռճիկի կէսից աւելին, ինչպէս արդէն յայտնել էի։

—Նու՝ ինչ էք ասում, պարոն, դարձաւ ինձ տիկինը՝ իր կարկտահար խօսքն աւարտելուց յետոյ։

—Լաւ է սենեակը, պատասխանեցի։

—Լաւ է, ի հարկէ լաւ է. բայց դուք տասս ռուբլի էք առաջարկում. ասացէք, խնդրեմ, տասս ռուբլուն այդպիսի սենեակ կըտաճն. մաքուր փողոցի վրայ, այդպէս գեղեցիկ բակով, ծառերով. աւելացրէք, աւելացրէք. ասացէք վերջինը, մինչև ինչքան կարող էք տալ։

—Աւել չեմ կարող տալ, տիկին։

—Տասը ռուբլի։

—Այո։

—Բայց դա անկարելի է, պարոն։ Տասս ռուբլով այդպիսի սենեակ կը տաճն—շուրջ ածեց նա աչքերը

հարցական արտօրանքով, որ կանգ առան դռների մէջ կանգնած վոտիտ գերմանուհու վրայ,—հա, Ելենա, այդպիսի սենեակը տասս ռուբլով կը տաճն...

Ելենան լուռ ուսերը թօթուեց։

—Երեսուն ռուբլի չէ՞ք կարող տալ,—շարունակեց նա արագ,—եթէ այդքան տաք, ես կը համաձայնուեմ. որտեղ էք աշխատում։

—Ես խմբագրատանն եմ աշխատում։

—«Թիֆլիզի թերթիկի՞»։

—Ո՛չ, հայոց լրագրի։

—Ա՜խ, որի՞։

—«Հեռաստանի»։

—Գիտեմ, գիտեմ։ Հայոց լրագրները խիստ լաւ են վարձատրում. ինչ բան է ձեզ համար երեսուն ռուբլի սենեակի վճարել։ Համաձայնուեցէք, պարոն, սենեակն այսօր և եթ պատրաստ կը լինի. երեկոյեան կարող էք իրերը տեղափոխել... Ո՞ր կողմում էք ապրում... Ա՜խ, լաւ է, մօտիկ է, կուզէք ծառային կուղարկեմ՝ օգնէ ձեզ, կամ աղախնին, որին որ կուզէք... Նու՝ ինչ էք ասում, երեկոյեան տեղափոխո՞ւմ էք իրերը. այդ պէտք է ասէք ինձ... Եթէ այսօր երեկոյեան չէք կարող, պատրաստ չէք, ՄԽայ վաղն առաւօտեան, ՄԸաս չունի. միայն շուտ տեղափոխուեցէք, որքան կարելի է, շուտ... Եւ այն էլ իմացած եղէք, որ ես փողը միշտ սկզբից եմ առնում. որ դաք, հետներդ փող վերցրէք. կամ գուցէ այժմ դուք կը տաք ինձ փող. գոնէ մի մասը, օրինակ՝ տասնըհինգ, քսան ռուբլի... Նու՝ ասացէք, ասացէք, ժամանակն անցնում է, չէ՞ որ...

Ես շատ ժպտում էի ընկճուած. Ելենան ու Լեօվան հազիւ փոքր ինչ ժպիտի արտայայտութիւն ունէին. ինչպէս երևում էր, սա նրանց համար շատ սովորական է։ Ինձ քշում էր նաև Լեօվայի հայեացքը,

որ շեշտակի յառել ու կարծես զննում էր ինձ ու զարմանում...

—Նու՝ ի՞նչ ասեմ, հապա,—խոշորօրէն թօթուեց ուսերը տիկինը՝ ծիծաղելով, երբ տեսաւ իմ շլար հայեացքը և անխօս կանգնելս,—գուցէ, պարոն, չէ՞ք կամենում երեսուն վճարել. շատ կարելի է ծնողների, բարեկամների էք օգնում. այո, այո, ի հարկէ, դա կարող է լինել։ Այդքան երիտասարդ, հարկաւ ամուսնացած չէք լինի, ափսոս էք... ի հարկէ... Բայց ես ձեզ մի լաւ բան ասեմ. դուք կարող էք ընկերով ապրել. ձեզ նման մի ջահել տղայի հետ շատ լաւ կը լինէք, ժամանակն էլ ուրախ կանցնի... Ունե՞ք այդպիսի յարմար ընկեր...

—Այո, պատասխանեցի խորհելով,—հէնց մէկն այդ մասին ասում էր ինձ։

—Նու՝ պրծած է, պրծած է, էլ ի՞նչ էք երկար մտածում. գնացէք ուղղակի ձեր ընկերոջն ասացէք, իրերդ վերցրէք եկէք. երկու հոգու համար սենեակի գինը կաւելացնեմ միայն տասը ռուբլով, ամեն մէկիդ կընկնի քսանական ռուբլի... Նու՝ աւել ի՞նչ էք ուզում,—բորբոքուեց,—շքեղ, պայծառ սենեակ, կահ-կարասի, բակ, պարտէզ, առանձին մուտք, բանալի, ծառայ, աղախին, մի խօսքով ամեն ինչ և միայն քսան ռուբլի. ձրի է ուղղակի... Նու՝ ի՞նչ է, դարձեալ համաձայն չէ՞ք, հաա... Իմացած եկէք, որ հէնց այս ձմեռ, նոյն այդ սենեակում ապրում էր մի ինժենէր, իր կահով և միայն սենեակի համար վճարում էր վաթսուն ռուբլի, Աստուած իմ, վաթսուն ռուբլի. իսկ դուք քսան ռուբլի էլ չէք համաձայնւում տալ...

Ես ժպտացի։

—Իմացէք, որ միայն ձեզ եմ այդ գնով տալիս, դուք լաւ տղայ էք երևում, ճիշտ եմ ասում. հէնց առաջին օրից դուրս եկաք ինձ. ուրիշ մէկին չէի տայ, անկարելի է... Նու՝ ի՞նչ կասէք հիմա։

—Ես այժմ ոչինչ չեմ կարող ասել. պէտք է ընկերոջս տեսնեմ...

—Այո, ի հարկէ, անհրաժեշտ է. ե՞րբ կը տեսնէք ձեր ընկերոջը. այսօր, վաղը, նու՝ շատ լաւ, ձեր ընկերն անպայման կը համաձայնուի...

—Բայց պայմանները չասացիք. ինքնահոս, ծառայ...

—Աւելորդ է, աւելորդ է պայմանների մասին խօսել. կը գաք, կը տեսնէք։ Ձեր սպասածից միքանի անգամ աւելին կը լինի, ոչ-ոք դժգոհ չի եղել ինձանից։

Թւաց ինձ, որ տիկինն աչքով էր անում Լեօվային և Ելենային։ Հազիւ էի տիրապետում ինձ. չէի էլ մտածում հեռանալ, կարծես ինչ-որ սպասողական դրութիւն էր ստեղծւում։ Ի վերջոյ Լեօվան ասաց՝ յառելով ինձ իր ներողամիտ հայեացքը։

—Քանի որ ձեր ընկերն այստեղ չէ, զուր է խօսելը. վաղը ձեր ընկերոջ հետ եկէք, այն ժամանակ ամեն բանի մասին էլ կը խօսէք։

Այնպէս վատ էին ներգործում ինձ այդ խօսքերը. ես յառել էի նրան իմ ամօթահար, անզօր, բայց և քինոտ հայեացքը. այդ անմազ, անբեղ պատանու աչքերի խելօքութիւնն ինձ սպանում էր ուղղակի... Երբ նա ասում էր՝ եկէք ձեր ընկերոջ հետ, ես հասկանում էի՝ եթէ այդ ընկերը ձեր ասելուց յամենայն դէպս ամեն բան չի հասկանայ և կը գայ սենեակը տեսնելու, ներս մտնի թէ չէ, փէշդ կը քաշի, քիթը բռնած շտապ դուրս կը փախչի և հազիւ բակի դռնից դուրս եկած, բարձրաձայն կը ծիծաղի քո յիմարութեան վրայ։ Հայեացքը, որով նայում էր նա ինձ,

կարծես ասում էր.—Ինչքան յիմար ես, մթթէ չես հասկանում, որ այստեղ քո տեղը չէ, մթթէ չես զգում, որ սանձարձակ ու վիթխարի տիկինը ձեռք է առել քեզ ու զարձանում է. գնա, գնա, խեղճ տղայ... Աստուած իմ, ինչպէս խելօք էր այդ անմաղ պատանին. նա նայում էր ինձ բարձրից, ինչպէս մի անխելք և պարզ երեխայի...

—Ուրեմն ես գնում եմ ընկերոջս տեսնեմ,—ասացի՝ շփոթութեան մէջ շուռ գալով դէպի դուռը։

—Այո, այո, այսօր անպատճառ ձեր ընկերոջը տեսէք և լուր բերէք։

—Շատ լաւ։ Ու դուրս եկայ. Ելենան ճանապարհ տուեց ինձ՝ հայեացքը խոնարհած ներքև և աջ ցուցամատը դրած շրթունքին... Անցնում էի դահլիճի միջով. ինձ հետ դուրս եկաւ տիկինն ասելով.

—Բայց, պարոն, վաղն անպատճառ ինձ պատասխան բերէք. սենեակը մարդու չեմ տայ, ուզողներ կան, կսպասեմ ձեզ, անպատճառ եկէք...

Թւում էր ինձ, որ եռևիցս նա աչքով էր անում, և ժպտում էին. իսկ Լեօվան իր բարձր հասակով կանգնել է դռան մէջ, նայում է ինձ եռևից և ցաւում է իր խելօք դէմքով։

—Ցտեսութիւն, ասացի՝ դահլիճի դռնից դուրս գալով բակը և նոր միայն գլխարկս ծածկելով։

—Ցտեսութիւն. վաղն անպատճառ կսպասեմ ձեզ. եկէք դուք ոչ առաւօտեան, այլ ճաշից յետոյ, ժամը այդպէս վեցին... անպատճառ...

—Կը գամ անպատճառ, ասացի և դուրս էի գնում։

Հոգիս դողում էր ամօթից և յուզմունքից, բայց չգիտեմ ինչու, ես մխիթարւում, հանգստանում էի իմ սրտի խորքում. այն՝ ինչի համար որ գալիս էի, ես

տեսայ լիովին... Եւ անպատճառ կը գամ, թող ծաղրեն ինձ, անպատճառ կը գամ, ժամը վեցին...

—

Ժամանակին եկայ։

Ներս մտայ բակի դռնից՝ ամօթի ու վհատութեան մի թեթև քրտինք ուեց վրաս։ Ծառերի միջով երևում էր՝ նստած էին նրանք դաւթում—դահլիճի դռան առաջ։ Մօտեցայ և բարևեցի ժպտադէմ. կարծեմ այդ ժպիտս ասելիս կը լինէր.—Դուք ինձանով զարձանում էք, ես այդ գիտեմ...

—Ա՜, դուք էք, բարև ձեզ, բարև,—բացականչեց բարձր հրճւանքով տիկինը,—ճշմարիտ շատ զարմանալի է, ձեզ տեսնելիս ուղղակի ուրախութիւնս զսպել չեմ կարողանում, կարծես նոր երիտասարդ աղջիկ եմ դառնում։ Նու՝ տեսաք, ինչ ասաց ձեր ընկերը, համաձայնւում է, թէ չէ։

—Ընկերոջս չտեսայ, տիկին. երէկ և այսօր ման եկայ, բայց գտնել չկարողացայ։

—Այդ շատ ցաւալի է. ինչ անենք հիմա... Բայց միևնոյնն է, դուք միայնակ եկէք. ես ամեն կերպ կօգնեմ ձեզ, կաշխատեմ, որ դուք չնեղւէք. եկէք, հա, ինչ էք ասում։

Մինչ այդ, վերևի պատուհաններում երևացին մի քանի գլուխներ, որ ինձ էին դիտում՝ զսպած ժպիտներով։ Մի կասկած ընկաւ սրտումս. չլինի՞ սրանք էլ գիտեն ամեն բան և այժմ նայում, զարձանում են ինձանով։ Ով գիտէ այս դիւային տիկինն ամբողջ թաղում բարձրաձայն ծիծաղով արդէն տարածել է իմ համբաւը. ախ, Աստուած իմ, այս ինչ վիճակ եմ կրում ես...

—Բայց դուք սխալւել էք, որ գնացել ու ման էք եկել. պէտք է փնտռէիք ձեր ընկերոջը, հասկանում

էք, պէտք է փնտռէիք... Այդ դէպքը հէնց ցոյց է տալիս, թէ դուք դեռ որքան անհոգ երեխայ էք... Ճշմարիտ չէ՞, խօսք չէ՞ք վիրաւորւում. բայց դուք ինձ շատ էք դուր գալիս և հէնց այդ պատճառով... Ինչո՞ւ էք կանգնած մնացել, խնդրեմ, առանց ձեռականութեան, մտէք, առէք դահլիճից աթոռ և նստեցէք...

—Ուրախութեամբ, ասացի և առաջացայ։

—Կամ թէ նստեցէք այնտեղ՝ ուղղակի ասպիճանների վրայ...

—Միևնոյնն է. ու նստեցի։

—Ա՜յ, այդպէս, հասարակ. անչափ շատ եմ սիրում պարզութիւնը։ Դուք ինձ ուղղակի հիացնում էք ձեր պարզութեամբ...

Այդ ասելով նա տեղաւորւում էր աթոռի վրայ. իր շարժումների ու ձայնի մէջ յաղթողի բաւականութիւնն էր երևում...

—Նու՝ ասացէք, սիրելի պարոն, ինչպէ՞ս անենք, ինչքա՞ն կարող էք վճարել սենեակի համար։ Մի՞թէ երեսուն ռուբլին շատ է և դժւարանում էք...

—Ամենաշատը, որ կարող եմ տալ, արդէն ասել եմ ձեզ, տիկին։

—Տասս ռուբլի՞. բայց դա անկարելի է, պարոն... հա՛, Ելենա,—դարձաւ նրան, որ նստել և ոտքի մեքենայով կարում էր,—դու՛ ասա, Ելենա, կարո՞ղ ենք տասս ռուբլով տալ սենեակը...

Ելենան մի ռոպէ թողեց մեքենան, վիզը փոքր ինչ թեքեց, ցուցամատը դարձեալ մօտեցրեց շրթունքին, յօնքերը շարժեց ու լուռ մնաց։ Ես նայում էի նրան լաւած հայեացքով. դարձեալ ինչ-որ ցաւ և խղճահարութիւն էր արտայայտում այդ դէմքը. կարծես թէ նա ասում էր ինձ կարեկցութեամբ.—ինչո՞ւ

դու այդքան միամիտ ես և չես հասկանում այդ բոլորը. վե՞ր կաց, գնա՛ հեռացիր այստեղից...

Աստուած իմ, այդ ռոպէին ես ուղղակի մօրս պէս սիրում էի Ելենային, այդ վտիտ դէմքը, լռակեաց շրթունքը և խոնարհ աչքերը։ Թող ծաղրեն, թող խաղացնեն ինձ, ի՞նչ փոյթ, երբ այնտեղ էր Ելենան, որ կարեկցում էր ինձ, որ համաձայն չէր նրանց հետ։ Նա, ի հարկէ, կարող էր հեգնանքով պատասխանել տիկնոջ հարցին.—երատասարդ պարոնն այնքան լաւ է, որ արժան չէ խօսել նրա հետ փողի մասին, թող վճարէ, ինչ որ կամենայ։ Եւ տիկինն իր մաժօր-տոնով բարձրաձայն կը ծիծաղէր այդ խօսքերի վրայ, կը դովէր իրան։ Բայց Ելենան այդ չի ասի, ոչինչ չի պատասխանի, և միայն իր լուռ շրթունքով, իր դէմքի ցաւով կուզենայ հասկացնել ինձ, որ գնամ, հեռանամ այստեղից։ Ա՜խ, հոգեակ, սիրելի և գգւելի Ելենա...

—Տեսնո՞ւմ էք, Ելենան էլ չի կարողանում վճռել հարցը. իսկապէս հեշտ չէ՝ այդ գնով տալ սենեակը—դժւար է. իսկ մերժել ձեզ—աւելի ևս դժւար է. այո՛, ինչո՞ւ էք ծիծաղում, ճշմարտութիւնն այս է։

Այդ միջոցին դահլիճով արագ անցաւ և մօտեցաւ դռանը մի օրիորդ։ Ես կամեցայ վեր կենալ և նրան ճանապարհ տալ, բայց թեքւեցի մի կողմի վրայ և նստած մնացի։ Նա կռթնեց դռան փեղկին, նայում էր ինձ շեշտակի և թւում էր՝ զարմացքոտ։ Ես նայեցի նրան, ծռելով վիզս և իրանս. այդ դիրքի մէջ, անկասկած, ես շատ ծիծաղելի կը լինէի։

Աստուած իմ, մի՞թէ սրան էլ ասած կը լինէր, և սա էլ ճիշտ ժամանակին եկել էր տեսնելու զւարճալի երիտասարդին։ Աչքովս ընկաւ տիկնոջ հայեացքն օրիորդին և թւաց ինձ՝ այդ հայեացքն ասում էր.—հը՞, ի՞նչպէս է, հաւանո՞ւմ ես... Լեօվան էլ կանգնել էր

դահլիճի մէջտեղում—հեռու, և ձեռները շալաբի գըրպանում՝ նոյնպէս նայում էր դռան միջով ինձ։ Յուզմունքից պաղ, թեթև քրտինքը նորից վրաս տեց։ Հայեացքս բնազդօրէն ուղղեցի վեր. այնտեղ լուսամուտներում աւելի շատացել էին գլուխները. փարթամ ու կոկ տիկիններ, օրիորդներ, նաև երեխաներ՝ կռացել հետաքրքրութեամբ նայում էին ցած։

Զայրացած և լըջացած վեր կացայ, գլխարկս ծածկեցի։ Այդ նշանակում էր, որ մնում եմ վերջին խօսքի. բայց թէ դեռ ինչ վերջին խօսք պիտի լսէի, այդ մասին, այնքան յիմար էի, որ հարց չէի տալիս ինձ։

—Գնում ե՞ք. բայց մենք մի հետևանքի չհասանք։ Մի՞թէ դուք, պարոն, այսքանից յետոյ կը հեռանաք առանց սենեակը վարձելու. դա մեծ ցաւ կը լինի ինձ, ճշմարիտ...

—Ի՞նչ արած, որ հնար չկայ։

Եւ ցտեսութիւն ասացի, գնում էի, տիկինն էլ գալիս էր ինձ հետ։

—Բայց սպասեցէք,—կանգ առեց նա մի վայրկեան՝ մատը շրթունքին ու նորից քայլեց,—մի ուրիշ բան էլ կայ, դուցէ դեռ կարելի է ուղղել... Հա, պարոն, դուք վաղը մի անգամ էլ նեղութիւն կրեցէք գալ ինձ մօտ։ Մի բան կայ, ես այսօր այդ կը տեսնեմ և վաղը ձեզ պատասխան կը տամ։ Հա՞, կը գա՞ք վաղը։

—Չգիտեմ, դուցէ ժամանակ չլինի։

—Ո՛չ, ո՛չ, այս անգամ էլ եկէք անպատճառ։ Դէ դուք խմբագրատուն էք գնում աշխատելու կարծեմ բաւական ուշ։ Դուք ինձ մօտ կարող էք գալ առաւօտեան, նու՝ իննին. հա՞, յարմար չէ՞ք. ազատ չէ՞ք այդ ժամին։

—Ազատ եմ։

—Նու՝ էլ ի՞նչ, ինչո՞ւ ժամանակ չի լինի։ Եկէք անպատճառ. դուցէ այս փորձը յաջողւի. ես չեմ ուզում դուք՝ որ այսքան գնացիք եկաք, դատարկաձեռն հեռանաք։ Ցտեսութիւն, վաղն անպատճառ եկէք։

Եւ մի-երկու քայլից ետ դարձաւ աւելացրեց.—Դուք մեզ արդէն բաւական ծանոթ էք, եկէք ուղղակի ներս մտէք։

Տէր Աստուած, ինչպէս նա այնուամենայնիւ կարողանում է հանդստացնել մարդու, յիմարացնել ուղղակի։ Կարծես թէ լիովին հաւատացի նրան և հանդարտուեցի։ Ու թէպէտ կասկածանքս մի կողմից ասում էր ինձ, որ այժմ այն բակում ասում ծիծաղում են իմ մասին շախ-շախ, իսկ Ելենան ցաւով ու գլուխը կախ՝ աղմկում է իր մեքենայով, բայց միւս կողմից ուրախանում եմ, ինչ-որ յոյս է զարթնում մէջս և փափագում եմ առաւօտեան ինն ժամին։

Սա ուղղակի ապշեցուցիչ է...

—

Առաւօտեան ինն ժամին այնպէս խաղաղ էր այն գեղեցիկ գաւիթը, կարծես խոր գիշեր լինէր։ Մօտեցայ դահլիճի դռանը և թէպէտ միտս էր տիկնոջ պատուէրը, որ ուղղակի մտնեմ, բայց էլի ես կամացուկ թխթխկացրի դռան ապակին։

—Մտէք, լսեցի շիրմայի յետևից։

Մտայ։

—Այդ դո՞ւք էք, բարի լոյս։ Անցէք ուղղակի շիրմայի այս կողմը, առանց ձևականութեան։ Այս մի երկու օրում մենք այնքան ծանոթացանք, որ ճշմարիտ, էլ քաշւելս չի գալիս։ Նու՝ այդպէս է, ի՞նչ անեմ։

Ես արդէն, թէպէտ վարանելով, անցել էի շիրմայի միւս կողմը։

Տիկինը հսկայօրէն պառկած էր մահճակալի

վրայ, մի թևով հոլանի նեցուկ տուած գլխին՝ բարձի վրայ, իսկ միւսով բռնած բերնին պապիրոսի գլանակը։

—Մօտեցէք, մօտեցէք ուղղակի, հասարակ, նըստեցէք ահա այստեղ,—շարժեց ոտները մի կողմի վրայ և ձեռքով ցոյց տուեց ինձ տեղ մահճակալի վրայ՝ ոտների մօտ։

Նստեցի։ Ես ինձ ամենևին հաշիւ չէի տալիս, թէ այդ ինչպէս օտար կնոջ մահճակալի վրայ նստել և նայել նրան իր կիսամերկութեան մէջ։ Անթև ներքնաշապիկ կար միայն հագին՝ լայն օձիքով ու կրծքի ճեղքւածքով, որից կիսովի երևում էին ահարկու ստինքները։

Զարմացայ, որ մի պահ նա չխօսեց. ծծելով պապիրոսի ծուխը, նայում էր ինձ սուր ու թեթևակի ժպտող աչքերով։ Այդ կինը պէտք է խօսէր անպատճառ, խօսէր շատ և շուտ-շուտ։

—Նու՝ ինչպէ՞ս ես զգում քեզ, սիրելի երիտասարդ. սենեակ վարձելդ չյաջողեց։ Ես էլ իմ կողմից ամեն բան արի, բայց չի յաջողւում, չի յաջողւում, չի յաջողւում. նու՝ ի՞նչ անենք։

—Ի հարկէ, մի ուրիշ տեղ կը վարձեմ։

—Անպատճառ, անպատճառ, մի լաւ տեղ վարձեցէք։ Բայց իսմ չէ՞ք տխրում,—ասաց եռանդով, փոքր ինչ ուղղւեց անկողնի մէջ, դէմքի վրայ լայն հրճւալից ծիծաղ բացւեց, և բարակ ադեալի տակ իրար սեղմեց ծանր ոտները։

Իմ մարմնով թեթև սարսուռ անցաւ։ Միամտութիւնս տեղի էր տալիս ինչ-որ երկիւղի. ես այժմ կարծես վախենում էի նրա հայեացքից և դէմքի ծիծաղից։ Պապիրոսի գլանակն արդէն դէն էր գցել։ Կասկածը նորից սկսեց դարթնել մէջս.—Չլինի՞ այս տիկինը շա-

բունակում է ծաղրել ինձ. այժմ էլ նա կը փորձի իմ ամօթխածութիւնը և կը ծիծաղի վրաս...

—Էդպէս, էդպէս. մի լաւ տեղ. ես էլ իմ կողմից դարձեալ կաշխատեմ, կը տեսնեմ իմ ծանօթներին, բարեկամներին և մի լաւ սենեակ կը գտնենք... Իսկ հիմա խօմ չե՞ս շտապում։ Ի հարկէ, դեռ շատ ժամանակ կայ... Դէ դրուստն ասա, ինձանից խօմ չե՞ս վիրաւորւել, շատ խնդրում եմ՝ ուղիղն ասա։

Վերջին խօսքերի հետ նա թափով մեկնեց թևն ու ամուր բռնեց իմ ձեռքը, միքիչ քաշեց իրան։ Ես վախեցած՝ թոյլ դիմադրութիւն էի միայն ցոյց տալիս։

Մտքերը կայծակի պէս, զողի հետ միասին անցան գլխովս։ Աստուած իմ, ի՞նչ պիտի անեմ ես հիմա, եթէ այս խենթ, դիւական կինը ոգևորւի և ուզենայ գրկել ինձ իր թևերի մէջ։ Նայում էի նրա կրծքին, մարմնի ամբողջ հսկայութեանը՝ ադեալի տակ, և զարհուրում էի։ Ես ուղղակի կը կորչեմ այնտեղ. նա իր հաստակուռ կոներով իմ ոսկորներս կը ջարդի...

—Ուղիղն ասա, խօմ ինձանից չե՞ս նեղացել, կարելի է քեզ վիրաւորեցի, ես մեղաւոր եմ քո առաջ, ների՞ր ինձ, ների՞ր, աղաչում եմ...

Տէր-Աստուած, սա ուղղակի գիժ է. իսկապէս սա ինձ կը քաշի հիմա իր գրկի մէջ, կը ջարդի, կը խեղդի. կը խեղդի ուղղակի իր հսկայական կրծքի վրայ։ Եւ ես ի՞նչ կարող եմ անել այս դևի, այս վիթխարի թևերի առաջ. ոչինչ, ուղղակի ոչինչ...

—Դէ, ասա, ասա, ներում ե՞ս...

—Այո, այո, ներում եմ... Ու խօսքերս խեղդւեցին կոկորդիս մէջ. թւաց, որ ինձ յանկարծակի խլացրին, կուլ տւին ու ծածկեցին շառաչող ալիքները...

—

Ա՜խ, Տէր Աստուած, ի՞նչ մի քրտինքից աղաս-

ւեցի... Կարծես տարուում էի ովկիանի մութ ալիքների վրայ՝ կորցրած ինձ, կորցրած իմ տեղն աշխարհի վրայ...

Որ դուրս եկայ շիրմայից դահլիճ, դահլիճից դաւիթ, մանաւանդ դաւթից փողոց, աշխարհն ինձ երևաց նոր փայլով։ Կարծես հէնց նոր էի ապ դուրս եկել անհուն ու պղտոր ովկիանի ալիքներից։ Օ՜ֆ, պէտք է աշխարհը տեսնել մահուան մերձութիւնից նորոնոր հեռացած և այն ժամանակ միայն նոր ճանաչել նրա գեղեցկութիւնները...

Ա՜խ, հեռու, հեռու. ես կը գնամ սենեակ վարձելու աղքատ փողոցներում, աղքատ տներում. այնտեղ, ուր պարզ է կեանքը և պարզ են յարաբերութիւնները։ Այնտեղ միայն ինձ չեն ծաղրի և այնտեղ միայն կանցնի հոգուս խռովքն ու կը գայ նրա հանդիստը...

1912 փետրվ.

ՍԱՐԵՐԸ ՄԱՆ ԵՍ ԵԿԵԼ...

Ցրիւ ու յոգնած՝ ընթանում էին աշակերտները լայն շօսսէյով։ Ահագին տարածութեան վրայ կարծես կենդանի քայլող ծաղիկներ էին շաղ տուել։ Քայլում էին հատ-հատ, փոքրիկ խմբերով, կամ զոյգ-զոյգ և յաճախ մէկի ուսը միւսի թևի յենարանն էր։ Աղջիկները՝ անփոյթ ու անկարգ մազերով՝ աղաների տօրմօզն էին, որոնք իրենց ընթացքը յարմարեցնում էին նրանց մանրաքայլին։

Երկար ժամերի խաղից ու զբօսանքից յետոյ այժմ նրանց քայլերի մէջ յագեցումն էր և ամբողջ ճանապարհն օծւած լինէր կարծես հեշտութեան հաճոյքով։

Ուսուցիչները ու վարժուհիները աշակերտների մէջ էին ցրիւ և նրանց յոգնութիւնն ունէին։ Այնպէս եղաւ, որ մէկը վարժուհի և միւսն ուսուցիչ գնում էին միասին ու միւսներից անջատ՝ բարձր թմբի վրայով։ Մինչև քաղաք ձգւում էր շօսսէն՝ հանդերի ու այգիների միջով՝ երկար վերստերով։

«Դաշտերը ման ես եկել,

«Եար, նա նայ—

Երգում էր ուսուցիչը՝ ցածր ու յոգնած ձայնով։

—Ո՞ւմ համար ես երգում,—հարցնում էր վարժուհին՝ քայլելով նրա կողքով։

—Ո՛վ սիրում է՝ նրա համար։

—Ո՞վ է սիրում։

—Ո՛վ ուզում է։

—Ով ուզում է՞... Ես ուզում եմ։

—Սիրիր։

—Ո՞ւմը։

—Ումը կուզես։

—Ումը կուզեմ. բայց որ նա չի ուզում։

—Կուզի։

—Որ չի ուզում։

—Ի վերջոյ կուզի։

—Լաւ. բայց որ չի տեսնում։

—Կը տեսնի։

—Զէ, չի տեսնում ուղղակի։

—Կը տեսնի շեղակի։

—Այսինքն։

—Այսինքն վերջ ի վերջոյ կը տեսնի։

—Է՜հ, էդպէս արդէն ուշ կը լինի... Ասացէք, ինչ է հարկաւոր մէկին՝ սիրելու և սիրուելու համար։

—Ոչինչ. փիքիչ մանուշակ, միքիչ անուշակ, միքիչ էլ արեգակ։

—Մանուշակ, անուշակ, արեգակ... Ով ունենայ սրանք, նրան կը սիրեն...

—Այո, ով ունենայ այս հասարակ, պարզ փունջը, նրան ամենքը կը սիրեն։

—Եւ նա ինքն էլ կարող է սիրել։

—Այո, ումն ուզենայ...

«Փունջերով տուն ես եկել,

«Եար, նա նա նայ—

Երգում էր դարձեալ ուսուցիչը։

—Ի՞նչ ես կարծում, ես չունեմ մանուշակ ու արեգակ։

—Դո՛ւ, ինչ ասեմ... Որ էդպէս է, թող մի նայեմ քեզ ու հոտ քաշեմ...

Ու վերցրեց օրիորդի թևը. ընթանում էին հան-

դարտ ու ներդաշնակ։ Նրանց շուրջը լայն շօսէյի վերայ՝ աշակերտներն էին՝ ցրիւ ու յոգնած։

—Ինչպէս անդարդ ու նախանձելի մարդ ես դու, ասում էր վարժուհին ուրախացած։

—Անդարդ։

—Հա. ինչու համար են, ինչ ես կարծում, ելակների փնջերը, կամ այն, որ մէկը, դիցուք ես, վազվզում ու խայտում է մի ուրիշի, դիցուք քո առջևով ամեն տեղ. ինչու համար է, երբ կանաչ խոտերի վրայ հանգստանալու համար մէկն իր ծունկը բարձ է տալիս միւսին. հա, դէ, ասա տեսնենք, ինչու համար է։

—Գեղեցկութեան համար։

—Լաւ, դու ի՞նչ ես զգում այդպիսի գեղեցկութիւն տեսնելիս։

—Ես ուրախանում, հրճւում եմ և ասում. ինչպէս լիքն է աշխարհս սիրով և անձնուիրութեամբ։

—Միայն։

—Բաւական չէ։

—Է՜հ, անդարդ մարդ ես։

Ու շուռ տուեց երեսը։

—Խռովում ե՞ս։ Բայց դու ունես շատ մանուշակ ու արեգակ։

—Այո։ Ուրեմն ես կարող եմ սիրել։

—Ումն ուզես։

—Ումն ուզեմ։

—Այո, ումն ուզես։

—Բայց նա, որին սիրում եմ, չի տեսնում։

—Կոյր է։

—Ո՛չ, անուշադիր է, սէրս չի նկատում։

—Ուշադրութիւնը կը դայ մի օր։

—Ո՛չ, շատ անյուսալի է։

—Եթէ այդքան անյուսալի է, էլ նրան մի՛ սիրիր։

—Բայց չեմ կարող... ես քեզ եմ սիրում...

Ու միւս թևն էլ բերեց, երկուսով կախուեց ուսուցչի թևից թեթևակի, գլուխը փոքր ինչ հպելով նրա ուսին։

—Զարահճի կատակ. ու ծիծաղում էր ուսուցիչը բարձրաձայն, մինչդեռ վարժուհին խնդում էր՝ գլուխը կախած ու մեղմակի ժպտելով։

—Կատակ, այո,—ասում էր վարժուհին խնդած,—յիշում ես մեր առաջին տեսնելն իրար։

—Առաջին տեսնելը. սպասիր։

Ու մտածում էր։

—Դու նստած պատշգամբում մեծ դրասեղանի առաջ, ընդունում էիր խնդիրներ ծնողներից։

—Այո, այո, յիշում եմ. շատ ծնողներ էին, շրջապատել էին ամբողջ դրասեղանը։

—Հէնց այդ ժամանակ ես ներս մտայ...

—Հէնց այդ ժամանակ դու ներս մտար՝ ճիշտ ինչպէս աշխարհիկ ու նրբակիրթ մի կին...

—Հա, նո՛ւ...

—Սպասիր, սպասիր... Բայլում էիր ծանր ու լուրջ, ունէիր բարձր, խնամոտ կուրծք, մեծ գլխարկ՝ վարդագոյն շղարշով՝ կապած ծնօտիդ տակ...

—Ճիշտ այդպէս...

—Սպասիր. առաջացար ծանր ու կանգ առար սեղանին մօտիկ՝ զոյգ ձեռներով յենուած բոլորովին նոր ձևի ճապոնական հովանոցիդ...

—Յետոյ դուք վեր կացաք և շատ քաղաքավարի ու նաև սիրալիր, այո, սիրալիր աթոռ առաջարկեցիք ինձ... ձեզ մօտիկ...

Ու ծիծաղեցին բարձրաձայն։

—Բոլորովին ճիշտ է։

—Այս բոպէիս,—ասացիք դուք ինձ խիստ ուշադիր և շարունակեցիք ձեր գործը... Կարծեմ ես ձեզ վրայ տպաւորութիւն թողի...

—Դուցէ։

—Այո, երբ աւարտեցիք սկսած գործը, ապա դարձաք ինձ նոյն յուզմունքով.—Ինչ կը կամենայիք, տիկին։ Ձեզ ուղղեցին իսկոյն, որ ես օրիորդ եմ։ Դուք ներողութիւն խնդրեցիք՝ կարմրելով և հարցրիք,—Ինչ կը կամենայիք, օրիորդ։ Դարձեալ ձեզ ուղղեցին, որ ես ոչինչ չեմ ցանկանում, այլ նոր հրաւիրուած վարժուհին եմ... Դուք արդէն... նու, ձեզ կորցրիք...

—Ո՛չ, ո՛չ, եթէ կարող էք ճիշտն ասել՝ այդ ժամանակ ի՞նչ տեղի ունեցաւ ինձանում։

—Ճիշտն այն է, որ դուք ձեզ կորցրիք ուղղակի։

—Ոչ... ես հիասթափուեցի...

—Հիասթափուեցի՞ք, ինչո՞ւմ սակայն։

—Ձեզնում։

—Որ ի՞նչ։

—Որ դուք մի վաժուհի էք և ուրիշ ոչինչ։

—Այսինքն։

—Այսինքն դուք սիրելու կամ սիրուելու համար չէք։

—Եւ դրա համար, երևի, իսկոյն առաջարկեցիք ինձ արտագրել աշակերտների ցուցակը։

—Այո, և մի հաւաածով ձեր ամբողջ շիկն ու փայլն ի՞ջաւ... Վարդագոյն շղարշով, ճապոնական հովանոցով նստել և աշակերտների ցուցակ արտագրել։

—Այնուհետև ի՞նչպէս. թողի՞ ես շղարշն ու հովանոցը։

—Ո՛չ, դուք յամառեցիք ձեր պճնասիրութեան մէջ։

—Ոչ պճնասիրութիւն, այլ վայելչութիւն... Եւ ոչ թէ յամառեցի, այլ պահպանեցի...

—Ոչքան անհրաժեշտ է դա ձեզ՝ որպէս վարժուհու։

—Նա մի անհրաժեշտութիւն է բոլոր պարագաներում. ամեն տեղ ամենից առաջ վայելչութիւն՝ արտաքին և ներքին։

—Դա գուցէ լաւ կը լինի. բայց այժմ իմ մէջ դարթնեց մի հարց.—ինչ տպաւորութիւն թողի ես ձեզ վրայ այն ժամանակ։

—Ոչ մի տպաւորութիւն. դուք ունէինք շատ առօրեական մի հագուստ, շարժ ու ձևերդ սովորական մահկանացուներից ստոր. նայելով ձեզ ես մտածում էի,—ահա մի տղամարդ, որին կարող է անուշադրութեան մատնել ամեն մի կին։ Դուք իմ ծիծաղն էիք շարժում...

—Դա էր, ուրեմն այն, որ դուք ժպտում էիք...

—Զգիտեմ...

—Լաւ, յետոյ, սակայն։

—Յետոյ սակայն այլ բան։

—Ի՞նչ։

—Իմ աչքերս թափառեցին և դարձան վերստին աւելի քան հասարակ մարդուն, այսինքն ձեզ...

—Պատմիր։

—Իմ գալու հետևեալ օրից իսկ դպրոցական օրերն էին և անցնում էին՝ մէկը խիստ նման միւսին... Ես նայում էի ձեզ անընդհատ.—դասերին՝ դասեր, միջոցներին՝ խաղեր, ժողովներին՝ վէճեր. այդպէս յափշտակւած էիք դուք միշտ. հաղւադէպ զբօսանքներին էլ անյաղ զւարճութիւն և խիստ բարձրաձայն ծիծաղ։ Եւ ուրիշ ոչինչ... Թւում էր ինձ՝ ընթանում եմ մոլորակի պէս, և օրերը սատակացնում են միայն ընթացքը, որի մէջ ես տաքանում եմ, տաքանում ու շիկանում։ Բայց չեմ մոռանում իմ վարդագոյն շղարշն ու

ճապոնական հովանոցը. այնպէս որ ոչ-ոք չի տեսնում իմ վազքն ու հուրը... Ամենից աւելի դուք... Բացել է դարունը. ես այժմ շիկացած մի մոլորակ՝ անցնում եմ իմ հարթուղին՝ շրջապատւած ամբողջ ցրտաբոյր սառոյցով։ Եւ պիտի կրեմ ես իմ մէջ այնքան կրակ, որ հալեցնեմ այս ողջ սառոյցն ու ճնամ դարձեալ տաք...

—Պատմիր։

—Պատմեցի...

—Դիւր է դալիս ինձ. պատմիր, թէկուզ սուտ լինի։

—Սուտ։

—Թւում է ինձ՝ սուտ են ասածներդ։

—Վկաներ ունիմ։

—Թող խօսեն։

—Թող խօսեն ծաղկի տառւօտեան թարմ փնջերը բաժակով այն դասարանների ամբիոնին, որտեղ առաջինը դու դաս ունէիր։

—Ա՜, դրանք միշտ իմ հիացմունքն ու զարմանքն էին շարժում. ճիշտ է, ու կարծես մանուշակն է բուրում անյայտութեան մէջ, որովհետև քո էլ այդ փնջերիդ բերողն անյայտ էր ինձ...

—Թող խօսեն ինձ մօտ քանիցս թէյին մատուցած կարկանդակները՝ իմ իսկ ձեռքով քո իսկ համար պատրաստւած և քո անունին երգած երգերով քաղցրացած...

—Անցեալ անցքերը կոկոն՝ այժմ բացւում են քաղցր բուրելով, վասն զի ինձ անյայտ էր այդ կարկանդակների պատմութիւնը։

—Թող խօսեն՝ հոգուս ջերմութեան մէջ քո առաջ չարածս ցոյցերը... Թող խօսեն համբոյրի կանչող կարօտներս՝ աչքերիս խաղաղութեան տակ...

—Հերիք է. կարճ՝ ինչպէս է քո սէրը։

—Իմ սէրը. նայիր այս շօսսէյին՝ լայն ու արևոտ, որ ձգւում է հանդերի ու այգիների միջով՝ միշտ նոր ու թարմ տեսարաններով, բայց առանց ծաւալւելու, առանց յորդանալու... Իմ սէրը նրա լայնութիւնը, ջերմութիւնը և միշտ նոր զարդարանքներն ունի...— Նայիր ծաղիկների պէս ցրւած այս աշակերտներին և տես նրանց, որ իրենց թեը դրած ընկերոջ ուսին՝ ընթանում են անելկբայութեան մէջ... Իմ սէրս նրա մտերմութիւնն ունի...—Նայիր մազերի խռնւած ալիքներին, որ մեղկ իջնում են աղջիկների ճակտի ու պարանոցի վրայ... Իմ սէրս նրա կիրքն ունի...

Ուսուցիչը նայում էր աշակերտների տեսարանին. ցրւած էին նրանք, բայց երևում էր մարդու աչքին, որ գնում են միասին, թէպէտ ոմանք շտապել և մինչև չերևալու աստիճան առաջ էին անցել, իսկ ոմանք դանդաղել և մինչև չերևալու աստիճան հեռու մնացել։—Ինչքան հեռու է առաջին աշակերտը վերջին աշակերտից,—խորհում էր նա,—բայց բաւական է սուլիչի կամ զանգի մի հնչիւն, և նրանք կանգնած կը լինին միասին, թերևս նոյնիսկ ուս-ուսի միևնոյն կարգում...

—Ինչքան տարածութիւն ենք անցել,—ասաց նա իւրովի։

—Ամբողջ տարածութիւնն անցանք մենք մի շնչով...

—Մի շնչով, կրկնեց նա։

Շտապ մօտեցաւ մի ուսուցիչ՝ փայտի արագ հարւածներով դեռնին։

—Պէտք է արդէն մի քիչ հաւաքենք մեզ, քաղաքի ծայրին ենք,—ասաց ու անցաւ։

—Պէտք է հաւաքենք մեզ, այո,—կրկնեց ուսուցիչը մեքենայաբար,—քաղաքի ծայրին ենք...

Նայեց վարժուհու դէմքին լուրջ հայեացքով։

Հանդստացած ու համբերատար սպասում կար այնտեղ։

—Դու սպասում ես. բայց ես քեզ մի հանելուկ առաջարկեմ. համաձայն ես։

—Առաջարկիր։

—Սպիտակ բլուրներից, այսինքն զբօսանքի տեղից մինչև այստեղ՝ քաղաքի ծայրը, ուր բացւած վարդերը կրքոտ բուրում են, որն էր կատարւած ամենամեծ փոփոխութիւնը...

—Պայմաններ չես առաջարկում, բայց էլի կը պատասխանեմ. այն, որ առաջ դու երգում էիր, իսկ հիմա չես երգում։

—Ո՛չ։

—Ուրեմն հակառակը. այժմ դու լռում ես, այն ինչ առաջ երգում էիր...

—Իմ հարցս ոչ մի խորհրդաւորութիւն չի պարունակում, այնպէս որ զուր էր... Զիմացար. ես ասեմ. այն, որ մենք սկսեցինք կոմեդիայով և վերջացնում ենք կարծես թէ դրամայով...

Ծիծաղեցին։

—Նու՝ ինչ. այդպէս քեզ զուր չէր գնայ, ասում էր վարժուհին։

—Ո՛չ։

—Ինձ էլ։

—Խոխոջող վտակն աւելի եմ սիրում, քան շառաչալից ջրվէժը. պարզ է, որովհետև առաջինին գգւել կարող եմ, իսկ վերջինին ոչ...

—Ուրեմն։

—Ուրեմն ոչինչ. մի քիչ մանուշակ, մի քիչ անուշակ, մի քիչ էլ արեգակ...

Ծիծաղեցին մեղմօրէն՝ իրար շփելով թևերը։

—Խոխոջող վտակ, նա է քաղցրը, ես նրան եմ սիրում,—ասում էր ուսուցիչը՝ արագացնելով քայլերը դէպի աշակերտները։

—Համաձայն եմ,—ասում էր վարժուհին նրա կիսադէմին։

Քայլում էին նրանք աշակերտների շարքի հետ՝ ջոկ-ջոկ և մինչև դպրոց այլ ևս չմօտեցան իրար։

—Յաեսութիւն, Հրանտ, ասաց վարժուհին, երբ բաժանւում էին՝ տները գնալու։

—Յաեսութիւն, Ա՛ստղիկ,—պատասխանեց ուսուցիչը։

Հետևեալ առաւօտեան, երբ նրանք տեսան իրար, Հրանտն ասաց.

—Ճշմարիտ է այն, որ դու մի խոխոջող վտակ ես։

—Ճշմարիտ է այն, որ դու ասացիր, թէ սիրում ես խոխոջող վտակը...

—

Զորս օր յետոյ երիտասարդների ու ջահել աղջիկների մի ուրախ, աղմկալից խումբ ցրւում էր քաղաքի մերձակայ կայարաններից մէկի պուրակում։

—Հրանտ, այս ուղղութեամբ ելակները խիստ առատ են,—ասում էր Ասողիկը։

—Ուղղութիւնը միշտ դէմ տուր, Ա՛ստղիկ, ես կը հետևեմ,—պատասխանում էր Հրանտը։

Շատ ելակներ էին փնջել, նաև շատ անուշ զրոյցներ...

Երբ նստեցին հանգչելու, հեռու լեռնալանջին էր, ու ոչ մի ձայն չէր հասնում այնտեղ։

—Աստղիկն իջել է լեռնալանջին,—ասում էր Հրանտը,—սեղմ նստելով նրա ոտներին մօտիկ։

—Ի՞նչպէս է դուր գալիս քեզ իմ ձեռքը,—հարցնում էր Ասողիկը՝ թողնելով ձեռքը նրա հպումների մէջ։

—Քո ձեռքդ ջրի ձայնն է, որ արծարծում է դէպի ջուրն ունեցած մեր սէրն ու կիրքը... Ես այժմ ցանկանում եմ համբուրել քեզ...

—Սպասիր... Այնքան փայփայել եմ ես այդ համբոյրի կարօտն իմ կրծքի տակ, որ կուզենայի նրան վայելել՝ լի գիտակցութեամբ ու զգաստութեամբ... Սպասիր՝ կենդրոնացնեմ ամբողջ ուշադրութիւնս, հաւաքեմ բոլոր զգայութիւններս...

Երբ Հրանտը ձգում էր նրա բազուկներից, գրկում իրանը հուպ, և ուժեղ շրթունքները սեղմում էր այտին, Ասողիկը գրկած նրան պարանոցից, հայեացքը վայելքի զգաստութեամբ լեցուն թողած տարածութեան մէջ, պահում էր նրան այսպէս երկար՝ վայելելու առաջին տենչալից համբոյրի քաղցրութիւնը...

Ո՛վ գիտէ՝ ինչքան ժամանակ անցաւ... միայն լեռնալանջով իջնելիս թւում էր թէ թռչում են։ Եւ երբ հասնում էին իրենց ընկերներին, Հրանտը երգում էր լի բախտաւորութեան շեշտերով.

Սարերը ման ես եկել,
Փնջերով տուն ես իջել.
Եար, նա նա նայ,
Փնջերով սէր ես բերել...

1912 մարտ

ՍՈՒԼԻՐ...

Ուշ գիշերին թատրոնից տուն էի վերադառնում, —պատմում էր ինձ բարեկամս։—Այնպէս եղաւ, որ յետ մնացի և անցնում էի դատարկ բուլվարով մենակ։ Ես շտապում էի, և քայլերիս ձայնը հատնում էր ա-կանջիս որպէս մի անագին աղմուկ, որովհետև շուրջս կատարեալապէս լուռ էր։ Միայն բուլվարի ծայրին, փոքրիկ ծառերի տուերում նշմարեցի մի կերպարանք, որ շարժւում էր դանդաղ՝ կոխելով իր ճանապարհը մի քանի քայլի լայնութեամբ։ Մօտենալով, լսեցի, որ նա սուլում է ինչ-որ անկանոն, բայց անփոյթ և ուրախ եղանակ։

Այնքան օտարոտի ու հետաքրքիր թւաց ինձ այդ, որ ես ակամայ դանդաղեցրի քայլերս, երբ անցնում էի նրա մօտով։

—Հ՜ը, ինչո՞ւ ես մենակ, բարեկամ, հարցրեց նա բոլորովին հասարակ։

—Իսկ դու ինչ ես անում։

—Սուլում եմ...

Այնքան անփոյթ, ուրախ երևաց նա ինձ և այնպէս գեղեցիկ ասաց՝ «սուլում» եմ, որ ես ընդդատաբար ժպտացի ու քայլեցի մօտ։

—Դու լաւ մարդ ես,—ասաց նա,—արի մի քիչ հետ մտնենք այս մօտիկ տեղը ու մի բաժակ գցենք. շատ եմ սիրում լաւ մարդկանց։

—Ցաւում եմ, բարեկամ, որ փող բոլորովին չունեմ, պատասխանեցի անկեղծ ափսոսանքով։

Փող՝ իսկապէս չունէի։

—Է՜հ, որ փող չունես, մենք էլ սուլենք, այդ էլ լաւ է. դէհ, սուլիր։

Եւ ինքն անմիջապէս սկսեց իր եղանակը՝ անփոյթ և ուրախ...

Ես միայն հիանում էի նրան լայն ժպիտով։ Իսկապէս ցանկանում էլ էի սուլել նրա հետ, բայց չէի կարողանում. և այդ յայտնեցի ես նրան։

—Է՜, բարեկամ. ուրեմն աշխարհը յաղթել է քեզ, —ասաց նա, ընդհատելով սուլիլը։—Սուլիր, սուլիր և ինքդ յաղթիր աշխարհին... Աշխարհը շատ է ողորմելի և հեշտ է նրան յաղթելը...

Ես սկսեցի լրջանալ. նա երևաց ինձ մի խելօք մարդ, նոյնիսկ փիլիսոփայ։

—Ի՞նչպէս, հարցրի։

—Հէնց այնպէս, սուլիր...

—Ես մի ամբողջ ընտանիք եմ կերակրում։

—Կերակրիր, բայց սուլիր...

—Միշտ էլ գանգատ ու բողոք եմ լսում։

—Լսիր ու սուլիր...

—Տխրութիւն ու վիշտ եմ տեսնում։

—Տես և սուլիր...

—Ուրեմն չզգամ ոչինչ։

—Զգա, բայց էլի սուլիր...

—Ապա ուրեմն չխորհեմ ոչնչի մասին։

—Խորհիր, բայց էլի սուլիր...

—Բայց այդպիսի մարդ չի լինի։

—Ես...

—Բայց դու, ինչպէս տեսնում եմ, աշխատանքի քրտինք չես թափում, և տունդ երևի փողոցն է։

—Բայց այնուամենայնիւ սուլում եմ... Լսիր...

Եւ սկսեց նա իր եղանակն աւելի անփոյթ և աւելի ուրախ։ Ես տեսնում էի, յիրաւի, որ նա յաղթել է աշխարհին։ Եւ ակամայից համեմատում էի ինձ նրա հետ։ Ես տքնում եմ կեանքի մէջ, նա սուլում է. ես մատատանջւում եմ, նա սուլում է... Ի՜նչ յիմար

հակադրութիւն. աշխատանք, մերձաւորներ ու բարեկամները ես ունիմ, իսկ երջանկութիւնը նա ունի։ Եւ անկասկած նա էլի կը սուլէր, եթէ նոյնիսկ ինձ պէս մի ընտանիք կերակրելիս լինէր. այդպիսի հաւատ էին ներշնչել ինձ նրա վստահ խօսքերը։ Եւ իրօք, մի՞թէ չի կարելի սուլել, միշտ սուլել. և՛ աշխատել, և՛ տեսնել, և՛ լսել, և՛ զգալ ու խորհել, բայց էլի սուլել...

—Լսիր, բարեկամ, դու սուլում ես, այո, և այդ լաւ է, բայց երևի այդ նրա համար է, որ սիրահարուած չես...

—Բարեկամս ծիծաղեց, սուլելով միաժամանակ։

—Ի՞նչ անեմ, երբ սիրահարուած եմ, հարցրի։

—Սուլիր...

—Գիտե՞ս, ես սիրահարուած եմ, բայց չգիտեմ ո՞ր աղջկան. ուզում եմ գտնել նրան, ի՞նչ անեմ։

—Սուլիր...

—Լսիր, լաւ հասկացիր՝ ի՞նչ եմ ասում. ես չափազանց սաստիկ եմ սիրահարուած, ես ուզում եմ լաւ, շատ լաւ, մի գեղեցիկ, շատ գեղեցիկ աղջիկ գտնել, հասկանո՞ւմ ես. ես պէտք է պաշտեմ նրան, անձս զոհեմ նրա համար, հասկանո՞ւմ ես. ի՞նչ պէտք է անեմ։

—Սուլիր, սուլիր...

—Դու բոլորովին տարօրինակ ես, քեզ չեմ հասկանում։

—Սուլիր, որ հասկանաս...

Ես արդէն զարմացած էի և պատրաստ հնազանդուել նրան, սուլել նրա պէս անփոյթ ու գեղեցիկ, բայց չէի կարողանում։

—Լսիր, այ մարդ, լաւ ես ասում՝ սուլեմ, բայց ախր սուլել չգիտեմ, սովորեցրու ինձ...

—Ա՛յ, ասաց նա և շշուկացրեց ուղիղ երեսիս։

Ես շրթունքներս շարժեցի, կամեցայ լրջօրէն շուայտել, բայց չկարողացայ, և զգացի, որ ամօթահարուում եմ։

—Սուլիր, բարեկամ, և կը սովորես,—ասաց անծանօթ փիլիսոփան.—նայիր տների պատերին, լապտերներին, տես ինչքան յիմար են նրանք բոլորը... Երբ սանդուխքներովդ կը բարձրանաս, ականջ դիր քայլերիդ ձայնին և տես ինչքան յիմար են հնչում նոքա... Երբ զգեստդ կը հանես՝ պառկելու, նայիր բացուած անկողնիդ և տես ինչքան յիմար է նա... Յիմար են այդ բոլորը, յիմար ու երջանիկ... Եւ երբ կը գտնես քո սիրած աղջկան, և ամեն անգամ, երբ կը համբուրես նրա շրթունքները, նա կը ժպտայ, դու նայիր և տես թէ ի՞նչքան յիմար՝ փայլում են նրա ատամները... Հասկանո՞ւմ ես... Դէ գնա, գնա և սուլիր...

Տարօրինակ մարդն ինձ ապշեցրել էր արդէն. ես արտասանեցի մի-երկու խօսք և հեռացայ... Նրա անփոյթ և ուրախ սուլոցը կրկին հնչեց ականջիս իմ ետևից... Նա թւաց ինձ արդէն մի կենդանի բարբառ, որ կարծես ասում էր՝ «սուլիր, սուլիր»...

Անցայ փողոցներով. հասայ տունս և կարծես ականջներիս միշտ հնչում էր անտուն փիլիսոփայի խօսքը՝ «սուլիր, սուլիր»...

Հանուեցի, նստեցի սպիտակ անկողնիս մէջ. հայեացքս յառած էր լամպարիս շառագոյն բոցին։ «Սուլիր», խորհում էի ես և զգում, որ մի գոհ ու նեղրողամիտ ժպիտ ծաղկում էր շրթունքներիս... Սուլել ուրեմն, միշտ սուլել. և՛ զգալ, և՛ խորհել, և՛ դիտել, բայց միշտ սուլել... Ա՜հ, ինչպէ՞ս լաւ կը լինի, ինչպէս թեթև... Եւ ինչու՞ ես այդ չգիտէի մինչև այժմ...

Վերմակս ծածկեցի, աչքերս սակայն բաց մնացին նայելու. միտքս արթուն էր ու զարթ և ժպիտն երեսիս...

Ինչպէ՞ս լաւ է՝ սուլել...

1910 նոյեմբ.

ՅԱՆԿ

1. Դիւթական երգը . . . . . .
2. Աշնան դէմ . . . . . .
3. Սփոփանք . . . . . .
4. Հողի գանձերը . . . . . .
5. Լեթայի երգը . . . . . .
6. Բարեկամս 16
7. Այսօր գար ինձ իմ սէրս 18
8. Առաջին անձրևը 20
9. Մեռնող ջահէլութիւնը 23
10. Թովչանքը 32
11. Արբեցումի պարը 36
12. Փլատակներից վեր 40
13. Փախուստ 43
14. Ջատկական գառը 54
15. Մութ ալիքների վրայ 62
16. Սարերը ման ես եկել 81
17. Սուլիր... 92